

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

### Հալեպի Ողբերգությունը Եւ Հայությունը

Սրտաճմլիկ տեսարաններ կը հասնին Սուրիոյ Հալեպ քաղաքէն: Հեռատեսիլի վրայ կ'երեւին աւերակներու տակէն դուրս բերուող երեխաներ ու քարուքանդ եղած հիւանդանոցներ: Այս բոլորէն անմասն չեն մնար նաեւ հալեպահայութեան այն փոքր տոկոսը, որոնք կը շարունակեն պահել այդ օժախը, հակառակ հինգ տարիներէ ի վեր շարունակուող քաղաքացիական անողոք պատերազմին:

Անցնող շաբթուայ ընթացքին, հրթիռակոծութեան հետեւանքով մէկ օրուայ մէջ հինգ հայերու մահը, որոնցմէ մէկը պատանի, եկաւ ցնցելու ամբողջ հայութիւնը:

Աշխարհ մտահոգուած է Հալեպի կացութեամբ: Կողմերը զիրար կ'ամբաստանեն իրավիճակի վատթարացման մէջ, սակայն խաղաղութեան հասնելու բոլոր ճանապարհները առայժմ կը տանին դէպի փակուղի:

Շարունակուող այս կացութեան ու մօտալուտ խաղաղութիւն հաստատելու հեռանկարի բացակայութեան դիմաց, հարց կը տրուի թէ, ի՞նչ պէտք է ընել տակաւին հոն մնացող հազարաւոր հայորդիներուն հետ: Ոմանք կը խորհին թէ, Հայաստանի պետութիւնը պէտք է դիմէ յատուկ միջոցներու, ժողովուրդը Հայաստան տեղափոխելու համար: Կայ այլ տեսակետ մը, որ կը խորհի թէ Հալեպահայ զաղուքը պահելը կարելոր է մարդկային անուճով, ու նաեւ մեր ազգային դատի տեսակետով: Հալեպի մէջ մենք ունինք ազգային կալուածներ, պատմական նշանակութիւն ունեցող կառոյցներ եւ հաստատութիւնները, որոնց պէտք է ամէն գնով տէր կանգնիլ:

Հայաստանի Արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարեց, որ Հալեպի հրթիռակոծումներու թիրախ դարձած հայերու տարահանման հարցը Հայաստանի կառավարութեան օրակարգին վրայ չէ:

Մինչ այդ, Հալեպի մէջ ներկայիս կապող 8-10 հազար հայեր, որոնք պէտք ունին մնալուն հոգածութեան: Այդ նպատակով Լոս Անճելըսի մէջ կը գործէ Սուրիահայութեան Օժանդակութեան Մարմինը՝ SARF-ը, որ անփոխարինելի աշխատանք կը կատարէ հինգ տարիներէ ի վեր: Այդ օժանդակութեան շնորհիւ կը շարունակեն գործել մեր վարժարանները եւ այլ հաստատութիւնները:

Լոս Անճելըսահայ համայնքը կոչուած է զօրակցելու այս համազգային մարմինին, որպէսզի ան կարողանայ շարունակել իր կարելոր առաքելութիւնը:

«ՄԱՍԻՍ»

## Ըստ Հայաստանի Ֆինանսներու Նախարարին Մինչեւ Տարեվերջ Պետական Պարտքը Կրնայ Հասնիլ 6 Միլիար Տոլարի

Հայաստանի նորանշանակ ֆինանսներու նախարար՝ Վարդան Արամեան յայտարարեց, որ մինչեւ տարեվերջ Հայաստանի պետական պարտքը կը հասնի աննախադէպ՝ 6 միլիար տոլար սահմանագծին:

«Պետական պարտքին պէտք է գումարենք նաեւ ներքին պարտքը, դա էլ, եթէ չենք սխալուած, տոլարային մօտաւորապէս գնահատականը եւս մինչեւ տարեվերջ 934 միլիոն տոլար է կազմում: Երբ գումարում ենք, դա շուրջ 5.8-ից 5.9 միլիար կարգի է լինում տարուայ վերջին», - ըսաւ նախարարը:

Նախարար Արամեան աւելցուց, որ միայն այս տարի, իշխանութիւնները Հայաստանի քաղաքացիներու անուճով շուրջ 1 միլիար տոլար վարկ վերցուցած են:

Նախարարը բացատրելով պարտքերու այս սրընթաց կերպով կուտակումը, որպէս զխաւոր պատճառներ յիշեց՝ Ռուսաստանի տնտեսութեան վիճակի վատացումը եւ հետեւաբար, դէպի Հայաստան դրամական փոխանցումներու նուազումը եւ նաեւ՝ պղնձի գիններու անկումը:

«700 միլիոն կրճատումը տրանսֆերտների եղել է 2014-2015 թուականներին: Մենք 2016 թուականին եւս ունենալու ենք 140

միլիոնի շուրջ, դա գնահատական է, էդքան կրճատում: Մօտաւորապէս 10 տոկոսանոց անկում է նկատուում տրանսֆերտների, որի հիմնական պատճառը եւս Ռուսաստանի տնտեսութիւնն է, որ այս տարի մենք կ'ունենանք լրացուցիչ եւս 1.2 տոկոս անկում Ռուսաստանի տնտեսութեան համար», - ըսաւ նախարարը:

Այն հարցին, թէ նման պարտքը վտանգաւոր չէ՞ Հայաստանի տնտեսութեան համար եւ վտանգ չկա՞, որ երկիրը կը յայտնուի անակազման եզրին, ֆինանսներու նախարարը պատասխանեց. - «Տենց ուրիշ միջոց էլ ապագայում լինում է, միջոց, եթէ, օրինակի համար, ես 2017 թուականը տանէի մի պիւտոճէ, որը որ պակասուողի նուազում չի կանխատեսում, այդ ուրիշ, ես կ'ասէի՝ աւելի է մեծանում»:

Վարդան Արամեան յայտնեց, որ եթէ զաւրջ տարուայ պետական պիւտոճէին մէջ ծախսերը չկրճատուին եւ եկամուտները չաւելանան, այդ ուրիշ պիտի աճի:

Նախարարը այլ մէկ ուշադրաւ յայտարարութիւն կատարելով պարզուեցաւ, որ երկու տարի

Շար.ը էջ 4

## Սէյրան Օհանեան Հեռացուեցաւ Պաշտպանութեան Նախարարի Պաշտօնէն



Պաշտպանութեան նոր նախարար Վիգէն Սարգսեան

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանի նոր կառավարութեան կազմէն հեռացնելու մասին տարածուող լուրերը իրականութիւն դարձան:

Սերժ Սարգսեանի Հոկտեմբեր 3-ի հրամանագրերով Վիգէն Սարգսեան նշանակուեցաւ պաշտպանութեան նախարար, իսկ էդուարդ Նալբանդեան վերանշանակուեցաւ արտաքին գործոց նախարար:

Սերժ Սարգսեանի Հոկտեմբեր 4-ին այցելելով Պաշտպանութեան նախարարութիւնն բանակի բարձրագոյն սպայական կազմին ներկայացուց պաշտպանութեան նորանշանակ նախարար Վիգէն Սարգսեանը:

Այսպիսով ամբողջացաւ նոր կառավարութեան կազմը, որմէ դուրս մնացին երկու «օլիկարխիկ» նախարարներ՝ Գագիկ Բեգլարեանը եւ Գագիկ Սաջատրեանը, ինչպէս նաեւ Սէյրան Օհանեանը, որու հեռացման մասին կը խօսուէր սպրիլեան պատերազմէն ասդին:

## Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսը Այցելեց Լոս Անճելըս

Սեպտեմբեր 29-ին Լոս Անճելըս ժամանեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.-ին:

Կեցութեան ընթացքին վեհափառ մասնակցեցաւ իր գահակալութեան 20-ամեակին նուիրուած շարք մը միջոցառումներու:

Սեպտեմբեր 30-ին, Կլէնտէլի «Սիվիլք» սրահէն ներս ան հանդիպում ունեցաւ երիտասարդութեան հետ: Հոկտեմբեր 1-ին Կլէնտէլի Հայ Սքուլի հանդիսասրահէն ներս տեղի ունեցաւ հրապարակային տօնախմբութիւն, իսկ Կիրակի, Հոկտեմբեր 2-ի առաւօտեան, էնսիւնոյի Սրբոց Նահատակաց եկեղեցիէն ներս տեղի ունեցաւ Հայրապետական Ս. Պատարագ:

Ծրագրուած էին նաեւ շարք մը այլ հանդիպումներ:

Շար.ը էջ 7

## Ընկ. Ալեքս Քեօշկերեան Ելոյթ Ունեցաւ «Թուրք Յառաջադէմ Մտաւորականութիւնը Եւ Հնչակեան Կուսակցութիւնը» Նիւթին Շուրջ



Տեսարան մը դասախօսական երեկոյէն

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արևմտեան Ամերիկայի Քաղաքական դիւանի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ հրապարակային ասուլիս մը՝ «Թուրք յառաջադէմ մտաւորականութիւնը եւ Հնչակեան Կուսակցութիւնը» նիւթին շուրջ:

Այս ասուլիս ելոյթ ունեցաւ ՄԴՀԿ Հայ-թուրք յարաբերութիւններու Յանձնախումբի անդամ եւ Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմնի նախկին ատենապետ, ծանօթ

հասարակական գործիչ Ընկ. Ալեքս Քեօշկերեան:

Կիրակի, Հոկտեմբեր 2-ին, Փաստիւնայի Հ.Կ.Բ.Մ.ի սրահին ներս ներկայ էին ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Տոքթ. Համբիկ Սարաֆեան, Կեդրոնական վարչութեան այլ անդամներ, շրջանիս վարիչ Մարմնի անդամներ եւ մեծ թիւով հանդիսականներ, որոնք հետաքրքրու-

Շար.ը էջ 7

### Ով է Բարձրանալու Աւելի

#### ԱՐԱՍ ԱՄԱՏՈՒՆԻ

Հոկտեմբերի 2-ին տեղի ունեցած ՏԻՄ ընտրութիւնը կարող է վերածուել Հայաստանի ներքաղաքական իրավիճակի եւ յառաջիկայ խորհրդարանի ընտրութեանը նախորդող գործընթացի «դի-դակտիկ» նիւթի: Հանրապետութեան երկրորդ եւ երրորդ քաղաքներում տեղի ունեցած աւագանու ընտրութիւնը, որը, ըստ հուլիսեան, նաեւ քաղաքապետի ընտրութիւն է, ստեղծեց մի իրավիճակ, որտեղ ՀՀԿ աւանդական «միանձնեայ» յաղթանակի փոխարէն՝ տեսակա-նում առկայ է նոյնիսկ ՀՀԿ-ի պարտութիւն: Յամենայնդէպս՝ թէ՛ Գիւմրիում, թէ՛ Վանաձորում ընդ-դիմադիր դիրքերից հանդէս եկող ուժերը ընդհանուր առմամբ ստա-ցել են աւելի շատ մանրատ, քան ՀՀԿ-ն:

Հետեւաբար տեսականորէն եթէ նրանք իսկապէս ընդդիմա-դիր են բոլորը եւ իսկապէս հրա-մայական են համարում ՀՀԿ-ն իշ-խանութիւնից հեռացնելը, թէկուզ միայն այդ երկու քաղաքներում, ապա թւում է, որ նրանք այլ տարբերակ չունեն, քան միաւոր-ուել աւագանիներում եւ ՀՀԿ-ին խաղի կանոններ թելադրել:

Այդ տեսանկիւնից Գիւմրիի եւ Վանաձորի ընտրութիւնները վերածուել են ընդդիմադիր դաշ-տի ինդիկատորի կամ «լուստ-րացիոն» մեխանիզմի: Այժմ կ'երե-ւայ, թէ այդ երկու քաղաքների աւագանիներ անցած քաղաքական ուժերից իրականում ով որքան է անկեղծ եղել կամ անկեղծ լինում, երբ յայտարարում է, որ ՀՀԿ-ն Հայաստանի համար ցարիք է եւ օր առաջ պէտք է հեռացնել իշխա-նութիւնից: Նրանք բոլորը այժմ ստացել են ՀՀԿ-ն առնուազն Գիւմրիի եւ Վանաձորի իշխանու-թիւնից հեռացնելու հնարաւորու-թիւն: Յատկապէս, որ այդ հնարա-ւորութիւնն օգտագործելու դէպ-քում նրանք կարող են հանրային հակայական լիցք կուտակել համա-պետական հնարաւորութիւնից՝ 2017 թուականի խորհրդարանի ընտ-րութիւնից առաջ:

Եւ հակառակը՝ եթէ Վանաձո-րում եւ Գիւմրիում ՀՀԿ-ն կարո-ղանայ պահպանել իր քաղաքապե-տական եւ իշխանական դիրքերը, ապա դա լինելու է խորհրդարանի ընտրութիւնից առաջ հարուած ընդդիմադիր դաշտի դիրքերին: Այսպիսով՝ արձանագրում է իս-կապէս աննախադէպ մի իրավի-ճակ, երբ ընդդիմութիւնը չի յաղ-թել, բայց ակնյայտ է, որ չի յաղթել նաեւ ՀՀԿ-ն, կամ երկուսն էլ չեն պարտուել, եւ ընտրու-թիւնն ըստ հուլիսեան դեռեւս շա-րունակում է՝ անկախ հրապարակ-ուած արդիւնքներից կամ հրապա-րակուած արդիւնքների հիմքով:

Ըստ հուլիսեան ստացում է, որ ՀՀԿ-ն չի յաղթել կամ չի յաղթել ինչպէս միշտ, սակայն իրավիճակը մարտահրաշխ է դարձել աւելի շատ ոչ թէ ՀՀԿ-ի, այլ ընդդիմա-դիր ուժերի, ընդդիմադիր դաշտի համար: Կամ ոչ պակաս մարտահ-

րաւէր է ընդդիմադիր դաշտի, քան ՀՀԿ-ի համար: Եւ սա իրակա-նում վերջին տարիներին հայաս-տանեան ներքաղաքական պատկե-րի տրամաբանական «հանգրուանն» է, երբ պարզուած է, որ ՀՀԿ-ի իշխանութեան խնդիրը աւելի շուտ ընդդիմադիր դաշտում է, այդ դաշտում առկայ խնդիրների տո-ղատակերում, եւ Հանրապետակա-նը իշխանութիւնը պահում է ոչ թէ սեփական ուժի, այլ մրցակից-ների կամ ընդդիմադիր դաշտի թուլութեան հաշուին: Սա էլ իր հերթին բերում է խորքային այն եզրակացութեան, որ Հայաստա-նում կայ ոչ թէ իշխանութեան, այլ ընդդիմութեան խնդիր:

ՏԻՄ ընտրութիւնները, որ անցկացուած են նոր Սահմանադ-րութեան պայմաններում արդէն իսկ իշխող ներքաղաքական նոր տրամադրութեան մթնոլորտում, դարձան այդ պարզ իրողութեան լակմուտի թուղթը: Թէեւ միւս կողմից՝ ունեն շանս դառնալու լիովին նոր իրականութեան մեկ-նարկային կէտ, ընդդիմադիր դաշ-տում անկման յաղթահարման եւ համեմատաբար առողջ գործըն-թացների գեներացման մեկնակէտ:

Ըստ հուլիսեան, Վանաձորում եւ Գիւմրիում տեղի ունեցած ՏԻՄ ընտրութիւնների խորքային ար-ձանագրումը այն է, որ թէ՛ իշխա-նութիւնը, թէ՛ ընդդիմութիւնը հասան հատակին, յայտնուեցին որոշակիօրէն հաւասար հարթու-թեան վրայ: Ի՞նչու տեղ այլեւս չկայ, հարցը բարձրանալու հնա-րաւորութիւնն է: Ըստ այդմ՝ խնդի-րը դա է՝ ո՞վ է ունակ լինելու բարձրանալու աւելի արդիւնաւէտ ընթացքի՝ իշխանութիւնը, թէ՞ ընդդիմութիւնը:

Ընդ որում, այստեղ խնդիրն այլեւս զուտ Գիւմրիում կամ Վա-նաձորում քաղաքապետ ընտրելը կամ աւագանու ուժերի յարաբե-րակցութիւն ձեւաւորելը չէ: Այս-տեղ արդէն՝ յատակում, խնդիրը ստանում է լայն մասշտաբ, տարա-ծում, եւ չափիչը կամ չափանիշն արդէն կոնկրետ իշխանութիւնը չէ, այլ հետեւութիւններն ու եզրա-կացութիւնը ՏԻՄ ընտրութեան նոր իրականութիւնից, մինչ այդ նախադէպը չունեցող իրավիճա-կից:

Աւելի արագ բարձրանալու հնարաւորութիւն ունի նա, ով աւելի խորը եւ ընդգրկուն կը կարողանայ տալ նոր իրավիճակի «խտորոշումը» կամ «ստուգա-բանութիւնը», նոր իրավիճակի համակարգային հիմքեր եւ պատ-ճառները՝ կարողանալով դրանք համարել աւելի մեծ շրջանակի վրայ, քան ՏԻՄ ընտրութիւնը:

Հայաստանը մտել է տրանս-ֆորմացիոն մեծ փուլ, որը պայ-մանաւորուած է մի շարք ներքին ու արտաքին գործօններով եւ ակն-յայտօրէն շարունակուելու է տա-րիներ: Այդ փուլը կոնկրետ ընտ-րական միջոցառումների զուտ արդիւնքներով չափելը կամ հաշ-ուարկելը կը բերի լրջագոյն ներ-քաղաքական վրիպումի:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

### Սերժ Սարգսեանի Վերջին Ազդանշանը

#### ՆԱՅԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Հայաստանի նոր վարչապետն ու նախարարները միաձայն խօ-սում են տնտեսութիւնում բարդ վիճակի մասին, իսկ վերլուծա-բաններն իրավիճակն աղէտալի են համարում:

Աճում է արտաքին պարտքը, պիւտճէի դեֆիցիտը, տնտեսական աճը ցածր է կանխատեսուածից, հարկային վճարների ծաւալը նուա-գել է: Դրա հետեւանքով յաջորդ տարուայ պիւտճէտային ծախսերը կրճատուել են 100 միլիարդ դրա-մով, բնակչութեան զգալի մասի համար եկամտահարկը բարձրաց-ուել է 2%-ով: Սակայն բոլորը հասկանում են, որ սա ժամանա-կաւոր միջոց է:

**Ապրիլեան պատերազմից յետոյ ամենայն սրութեամբ կանգնել է Հայաստանի արտաքին քաղաքականութեան եւ պաշտպանութեան ինքնիշխանութեան հարցը: Պարզ է դարձել, որ բազմաթիւ դժբախտութիւնների արմատը թէ տնտեսութիւնում, թէ անվտանգութիւնում ինքնիշխանութեան դեֆիցիտն է**

Փորձագէտներն ստեղծուած վիճակից ռազմավարական ելքի երեք քայլ են նշում՝ Հայաստանի տնտեսութեան բացում իրանի եւ Արեւմուտքի համար, ԵԱՏՄ-ին ան-դամակցութեան եւ Ռուսաստանի հետ պայմանագրերի պայմանների վերանայում, ինչպէս նաեւ իրական պայքար մենաշնորհների եւ օլիգո-պոլիաների դէմ, որը կարող է հետաքրքրութիւն առաջացնել ներդրողների մօտ:

Այս ամսուայ կէսերին ԱՄՆ-ում կայանալու է Հայաստանում պոտենցիալ ներդրողների հաւաք: Նոր կառավարութեան նշանակու-մը նրանց համար պէտք է ազդան-շան լինի, թէ որ ուղղութեամբ է շարժուելու Հայաստանը եւ մտա-դիր է արդեօք կատարել երեք սպասուող քայլերը:

Արտաքին գործերի նախա-րարի պաշտօնում էրդուարդ Նալ-բանդեանի վերանշանակումը խօ-սում է այն մասին, որ Սերժ Սարգսեանը կամ չի ցանկանում փոխել արտաքին քաղաքականու-թիւնը, որի պատճառով Հայաստա-նը յայտնուել է լուսանցքում, կամ էլ չի կարող ԱԳ նախարար նշանակել:

Էրդուարդ Նալբանդեանը վեր-ջին շաբաթուայ ընթացքում ԱՄՆ-ում էր, որտեղից չէր ցանկա-նում վերադառնալ: Նա դասախօ-սութիւններ էր կարդում, այցե-լում համալսարաններ՝ ցոյց տա-լով, որ իրեն չի հետաքրքրում՝ կը նշանակուի, թէ ոչ: Աւելի ճիշդ, նա վստահ էր, որ կը վերանշանակուի:

Ապրիլեան պատերազմից յե-տոյ ամենայն սրութեամբ կանգնել է Հայաստանի արտաքին քաղաքա-կանութեան եւ պաշտպանութեան ինքնիշխանութեան հարցը: Պարզ է դարձել, որ բազմաթիւ դժբախ-տութիւնների արմատը թէ տնտե-սութիւնում, թէ անվտանգութիւ-նում ինքնիշխանութեան դեֆի-ցիտն է:

Հանրային դիսկուրսում ամե-

նաշատը դժգոհ էին էրդուարդ Նալբանդեանի եւ գլխաւոր շտաբի նախկին պետ Եուրի Սաչատուրովի պահուածքից: Ատրպէյճանին ու-սական գէնքի վաճառքի եւ Մոսկ-ուայի կողմից Պաքուին աջակցե-լու կապակցութեամբ համընդհա-նուր գայրոյթի ֆոնին էրդուարդ Նալբանդեանը պատերազմի յա-ջորդ օրը մեկնել էր Մոսկուա, կարծես ոչինչ չէր եղել, իսկ Եուրի Սաչատուրովը ստորագրել էր հրադադարի մասին համաձայ-նագիրը:

Այսօր Նալբանդեանին վե-րանշանակել են, իսկ Սաչատուր-ովին նշանակել են Ազգային անվ-տանգութեան խորհրդի քարտու-ղար: Սա յստակ ազդանշան է ներդրողներին ու միջազգային հիմ-

նադրամներին, որ Հայաստանի հա-մար ինքնիշխան արտաքին քաղա-քականութիւնը դեռ անհասանելի է: Իսկ առանց ինքնիշխան քաղա-քականութեան չի կարող տնտեսու-թիւն՝ պայմանագրեր, ներդրում-ներ եւ վարկեր լինել:

Ի՞նչ է Սերժ Սարգսեանն Ամե-րիկայում համոզելու ներդրողնե-րին: Թէ՞ համաժողովը կը յետաձգ-ուի: Արդէն մի անգամ եղել է այդպէս, երբ Հայաստանի դոնոր-ների համաժողովը չեղեալ է ար-ուել ԵԱՏՄ-ին անդամակցութեան մասին Սերժ Սարգսեանի յայտա-րարութիւնից յետոյ:

«ԼՐԱԳԻՐ»

**ՄԱՍԻՍ**  
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

**ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՏԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱՎԿԵԱՆ  
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՅԵԱՋԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**  
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

**www.massispost.com**  
daily news updates

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կարէն Կարապետեան՝ «Եթէ Ստուերը Դաշտ Չբերենք, Ինչ ալ Ընենք, Երկիրը Երկիր Չենք Դարձնել»

Վարչապետ Կարէն Կարապետեանը ընդունած է Հայաստանի արդիւնաբերողներու եւ գործարարներու միութեան (ՀԱԳՄ) անդամներուն:



ՀՀ վարչապետ Կարէն Կարապետեան

Կառավարութեան պաշտօնական կայքէջի փոխանցմամբ, վարչապետը նշած է, որ կ'ակնկալէ գործարարներէն լսել գործարքներու զարգացման խոչընդոտող խնդիրներն ու մտահոգութիւնները եւ միաժամանակ առաջարկած է ներկայացնել կառավարութեան սպասուող այն քայլերը, որոնք բարենպաստ պայմաններ կը ստեղծեն գործարար միջավայրի համար:

ՀԱԳՄ-ի նախագահ Արսէն Ղազարեանը միութեան անունով շնորհաւորած է Կարէն Կարապետեանին վարչապետի պաշտօն ստանձնելու կապակցութեամբ, մաղթելով արդիւնաւէտ աշխատանք: Ան ներկայացուցած է միութեան անդամ գործարարներու հետ քննարկման արդիւնքով բարձրացած շարք մը հարցեր՝ ուղղուած գործարքներու միջավայրի եւ տնտեսական ներկայիս իրավիճակի դրական տեղաշարժերուն:

Կարէն Կարապետեան նշեց, որ Տնտեսական զարգացման եւ ներդրումներու նախարարութիւնը պիտի ըլլայ կամուրջ՝ կառավարութեան ու գործարարներու միջեւ եւ պիտի աջակցի բոլոր հարցերուն. «Մենք հետեւեալ խնդիրը դրած ենք՝ փոխել սկզբունքային վերաբերմունքը դէպի գործարարը: Մենք ամէն ինչով պիտի աշխատինք ցոյց տալ, որ ձեր գործընկերն ենք: Մենք պատրաստ ենք կանոնաւոր կերպով արձագանքել բոլոր բարձրացած խնդիրներուն եւ ամէն ինչ պիտի ընենք, որպէսզի համատեղ աշխատանքը ըլլայ առաւելագոյն թափանցիկ»:

Վարչապետի խօսքով, կառավարութեան գերխնդիրն է ստեղծել այնպիսի միջավայր, որպէսզի «սպիտակ դաշտին մէջ» աշխատող գործարարը ինքզինք յարմարաւէտ զգայ, իսկ ստուերին մէջ աշխատողը գիտակցի, որ առաջին հերթին ինք պէտք է դառնայ բարեխիղճ հարկատու. «Եթէ մենք ստուերը չբերենք, ինչ կ'ուզէ ընենք, երկիրը երկիր չենք դարձնէր»:

Միտքերու փոխանակութեան ընթացքին քննարկուած են մակրոտնտեսական զարգացման ռազմավարութեան, հաւասար մրցակցային դաշտի ձեւաւորման, Հարկային օրէնսգրքի նախագիծը եւ յարակից այլ հարցեր:

Վարչապետը կարեւորած է նման ձեւաչափով քննարկումները եւ գործարար համայնքի հետ շարունակական համագործակցութիւնը՝ առաջարկելով արագ արձագանքել կառավարութեան նախաձեռնութիւններուն եւ ճշգրիտ առաջարկներ ներկայացնել:

Վոլոդիա Աւետիսեանը Այլեւս Չի Դիմի Վաղաժամկետ Ազատման Համար

6,5 տարուայ ազատազրկման դատապարտուած ազատամարտիկ բանտարկեալ Վոլոդիա Աւետիսեանն այլեւս չի դիմի վաղաժամկէտ ազատման համար: Այս մասին Հոկտեմբերի 4-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է քաղաքական բանտարկեալի ընկեր, ազատամարտիկ Գագիկ Սարուխանեանը:

Նա հրապարակել է իր Վոլոդիա Աւետիսեանի յայտարարութիւնը, որտեղ նա նշում է, որ անցած 3 տարիների ընթացքում 4 անգամ «Վարդաշէն» ՔԿԶ-ի ադմինիստրացիան իրեն ներկայացրել է վաղաժամ ազատման, սակայն 4 անգամ էլ յանձնաժողովը մերժել է այդ հնարաւորութիւնը: Հներկայացնելով որեւէ հիմնաւոր բացատրութիւն:

Հենց այդ պատճառով էլ Վոլոդիա Աւետիսեանը որոշել է այլեւս չօգտուել այդ հնարաւորութիւնից:

Սարուխանեանը նշել է, որ Վոլոդիա Աւետիսեանը ազատազրկման ընթացքում որեւէ խախտում թող չի տուել, սակայն յանձնաժողովի անդամները գալիս ինչ եւ որ հարցեր են տալիս, ապա եզրակացութեան մէջ նշում, որ մերժում են, առանց նշելու պատճառները:

«ՀՀ-ին, ԲՀ-ին, ՀՀԴ-ին եւ ՕԵԿ-ին Ձայն Տուածները Համահեղինակ Են ՀՀ-ում Տեղի Ունեցած Արատաւոր Երեւոյթներին»

Գիւմրիում եւ վանաձորում ՀՀԿ-ին, ԲՀԿ-ին, ՀՅԴ-ին եւ ՕԵԿ-ին ձայն տուած քաղաքացիներն իրենց ընտրութիւնով արձանագրեցին ուղիղ իրենց համահեղինակութիւնը 2008թ.-ից յետոյ Հայաստանում տեղի ունեցած արատաւոր երեւոյթներին: Այս մասին Հոկտեմբերի 4-ին, Ազգային ժողովում ասաց ընդդիմադիր պատգամաւոր, «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան անդամ Նիկոլ Փաշինեանը:

«Այս չորս կուսակցութիւններն են նշում, քանի որ 2008թ.-ից յետոյ տարբեր ժամանակներում իրենք եղել են իշխանութեան հետ կոալիցիայի մէջ: Գիւմրիում այս կուսակցութիւնները ստացել են ձայների 72 տոկոսը, վանաձորում՝ 65 տոկոսը: Հետեւաբար, այս ընտրութեամբ քաղաքացիներն արձանագրեցին իրենց համահեղինակութիւնը 2008թ.-ից յետոյ Հայաստանում տեղի ունեցած արատաւոր երեւոյթներին, սա փաստ է, որը հնարաւոր չի հերքել», - ասաց Փաշինեանը:

Մահացածներն Ու Արտերկրում Գտնուողները Կրկին Քուէարկեցին

Հոկտեմբերի 2-ին Հայաստանի 6 մարզերի 377 համայնքներում կայացած Տեղական ինքնակառավարման Մարմինների (ՏԻՄ) ընտրութիւններում «Քաղաքացի-դիտորդ» նախաձեռնութեան ներկայացուցիչները արձանագրել են 190 ընտրախախտում: Այս մասին լրագրողներին յայտնեց «Քաղաքացի-Դիտորդ» նախաձեռնութեան ներկայացուցիչ Տիգրան Եգորեանը: «Քաղաքացի Դիտորդ» նախաձեռնութիւնը Հոկտեմբերի 2-ի ՏԻՄ ընտրութիւնների ժամանակ դիտորդական առաքելութիւն է իրականացրել 18 համայնքներում, ունեցել է 230 դիտորդ:

Արձանագրուել են ընտրախախտումների յայտնի գրեթէ բոլոր տեսակները. «Յուցակների անձշղութիւններ, ցուցակներում մահացած անձանց անուններ, մահացած մարդկանց փոխարէն քուէարկութեան դէպքեր, կաշառքի դէպքեր, դիտորդների իրաւունքների խախտումներ՝ յանձնաժողովի անդամներին ու նախագահների կողմից, ուղղորդումներ, քուէարկութեան նկատմամբ հակողութիւն սահմանման փորձերի եւ տեղամասից քուէարկութիւն հանելու դէպքեր, անհետացել են դրոշմակիրներ», - նշեց Տ. Եգորեանը: Անկախ

նրանից՝ անձր բացակայում է հանրապետութիւնից, թէ ոչ, ապահովուում են այլ անձանց փոխարէն քուէարկութիւններ»:

Հելսինքեան քաղաքացիական ասամբլիայի վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունցը, խօսելով կոնկրետ Գիւմրիում եւ վանաձորում տեղի ունեցած ընտրութիւնների մասին՝ դրանք որակեց որպէս խայտառակ:

Գիւմրիի տեղական ինքնակառավարման մարմիններու ընտրութիւնների նախնական տուեալներով Գիւմրիի աւագանի 33 «լիազօրագրերը» կը բաժնուեն քաղաքական 4 ուժերի միջեւ: Առաւելագոյն 34.7 տոկոս ձայն ստացած է «Բալասանեան» դաշինքը, 21.6 տոկոս ԲՀԿ-ն, 10.6 տոկոս «Հայկական վերածնունդ»-ը եւ 10.5 տոկոս ԳԱԱ կուսակցութիւնը:

Անցողիկ համարուող 6 տոկոսի շեմը չէ յաղթահարած 7 ուժ:

Վանաձորի մէջ, նախնական արդիւնքներով աւագանու անդամներու մանրատնետր բաշխուած են հետեւեալ ձեւով. Հանրապետական կուսակցութիւն՝ 13 մանդատ, «Լուսաւոր Հայաստան»՝ 10 մանդատ, «Հայկական վերածնունդ»՝ 5 մանդատ, «Բարգաւաճ Հայաստան»՝ 3 մանդատ, ՀՅԴ՝ 2 մանդատ:

Կրած Պարտութիւնից Յետոյ ՀԱԿ Վարչութիւնը Հրաժարական Չի Տայ

Հոկտեմբերի 30-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան տարեկան համաժողովը կը պատասխանի այն հարցին, թէ վարչութեան ո՞ր անդամների պատճառով կուսակցութիւնը տապալուեց Գիւմրիի եւ վանաձորի աւագանու ընտրութիւններում:

Ըստ Նիկոլ Փաշինեանի, վարչութեան ամբողջ կազմի հրաժարականը չի նշանակում, որ «Քաղաքացիական պայմանագիրը» Հանրապետականին եւ այլ ուժերին պարտուել է ազատ եւ արդար ընտրութիւններում:

Միւս տասը տոկոսը Նիկոլ Փաշինեանի սխալուելու հաւանականութիւնն է՝ գուցէ իսկապէս կեղծել են այս ընտրութիւնները, սակայն փաստ է, որ տեղամասերում քուէարկութիւններ չեն կեղծուել:

ՀԱԿ վարչութեան անդամ Լեւոն Զուրաբեանը պնդում է, որ Տեղական մարմինների ընտրութիւններն իշխանութիւնը կեղծեց սովորականի նման՝ ընտրութիւնների փոխարէն տեղի ունեցաւ քուէների աճուրդ:

Պատասխանելով լրագրողի հարցին, թէ գուցէ Գիւմրիում եւ վանաձորում Կոնգրեսի պարտութեան մէջ որոշ դեր ունեցաւ սպիրիտան պատերազմից յետոյ Սերժ

Սարգսեանի եւ Լեւոն Տէր-Պետրոսեանի մերձեցումը, Լեւոն Զուրաբեանն ասաց. «Դա կարող է ազդել, ես չեմ բացառում: Մեր պայքարի մեթոդները չպիտի երբեք ստեղծեն վտանգ կամ հրաժար Ատրպէյճանի յարձակուելու համար»:

Ըստ նրա, Տէր-Պետրոսեանն ու Սերժ Սարգսեանը վաղուց չեն հանդիպել, նույնիսկ խորհրդապահական խողովակներով շփումներ չուեն. «Վերջին շփումը որ եղել է նրանց միջեւ, դա եղել է հենց էդ հանդիպումը, որի մասին հրապարակաւ ասուել է»:

Ի դէպ, պարոն Զուրաբեանը սխալ է համարում Գիւմրիում ու վանաձորում տապալուելուց յետոյ վարչութեան ամբողջ կազմի հրաժարականը՝ դա կը նշանակէր, որ ընտրութիւնները եղել են ազատ եւ արդար. «Դու դուրս ես գալիս իրենց դէմ պայքարելու, իրենք կեղծում են ընտրութիւնները, ու դու դրա պատճառով պիտի հրաժարակա՞ն տաս: Դա աբսուրդ է»:

Փոխարէնը Նոյեմբերին կուսակցութիւնը կը հրախրի համագումար եւ կը ներկայացնի, թէ ինչ հետեւութիւններ են արուել Տեղական մարմինների ընտրութիւններում կրած պարտութիւններից:

Արտակ Չաքարեան. «Նոր կառավարութեան Համար Պէտք է Լիարժէք Յենարան Դառնանք

Հայաստանի հասարակութիւնը պէտք է նոր կառավարութեան համար լիարժէք յենարան դառնայ՝ յանուն երկրի զարգացման: Այս մասին Հոկտեմբերի 4-ին խորհրդարանում յայտարարել է Հանրապետական խմբակցութեան պատգամաւոր Արտակ Չաքարեանը:

Նրա խօսքով՝ նոր կառավարութիւնը քաղաքական աջակցութեան կարիք ունի: Այդ դէպքում նա կը կարողանայ իրականացնել երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ուղղուած խնդիրները:

«Հայաստանի հասարակութեան զգալի մասն աջակցում է այդ բարեփոխումներին, աջակցում են իշխանութիւններին եւ նախագահ Սերժ Սարգսեանին: Քաղաքացիական այդպիսի դիրքորոշման նախադրեալն է մեր հասարակութեան աճող ժողովրդավարութիւնը», - նշել է Չաքարեանը:

# ԼՈՒՐԵՐ

## Ռիչրտ Կիրակոսեան՝ Իսրայելը Փոխարինած է Թուրքիան, Որպես Պարուի Ամենաշխուժ Ռազմական Հովանավոր

Իսրայելը փոխարինած է Թուրքիոյ, որպէս Պաքուի ամենաշխուժ ռազմական հովանավորը: Այս մասին ըսած է քաղաքագէտ, Տարածաշրջանային հետազոտութիւններու կեդրոնի տնօրէն Ռիչրտ Կիրակոսեան՝ անդրադառնալով Ատրպէյճանի հետ համագործակցութեանն իսրայելի ակնկալներուն:



Տարածաշրջանային հետազոտութիւններու կեդրոնի տնօրէն Ռիչրտ Կիրակոսեան

Անոր խօսքով, Իսրայելի ու Ատրպէյճանի յարաբերութիւնները որոշակի ժամանակահատուածի մէջ խորացեր են ու զարգացեր երեք գործօններու հիման վրայ: «Նախ իսրայելը նաւթ կը ներմուծէ Ատրպէյճանէն: Երկրորդ, Իսրայելը Ատրպէյճանին կը դիտարկէ, որպէս ռազմավարական հարթակ հետախուզական գործողութիւններու համար, որոնք ուղղուած են դրացի Իրանին, որուն Իսրայելը սպառնալիք կը համարէ իր անվտանգութեան: Երրորդ՝ Իսրայելը գործընկերութիւն կը զարգացնէ Ատրպէյճանի հետ, որպէս շիւթ մուսուլմանական՝ թէպէտեւ պաշտօնական աշխարհիկ պետութեան հետ, ինչպէս ժամանակին՝ Շահի կառավարման օրով Իրանի հետ կը զարգացնէր»: - նշած է Ռիչրտ Կիրակոսեան: Բայց այս տարածաշրջանի համար, աւելցուց ան, ազրպէյճանա-իսրայելական յարաբերութիւններու լայն համատեքստը մտահոգող է, մանաւանդ հաշուի առնելով գէնքի վաճառքը

Ատրպէյճանին: Անդրադառնալով այն հարցին՝ արդեօք կարելի է խօսիլ երկու երկիրներու միջեւ «ռազմավարական դաշինքի» մասին՝ հաշուի առնելով Ատրպէյճանին իսրայելական գէնքի վաճառքը, Ռիչրտ Կիրակոսեանը նկատեց, - «Փաստօրէն մենք պէտք է ակնկալենք, որ իսրայելական գէնքի վաճառքը Ատրպէյճանին կը շարունակուի, մանաւանդ երբ Իսրայելը փոխարինած է Թուրքիան որպէս Պաքուի ամենաշխուժ ռազմական հովանավոր, չնայած դեռ կը գիշի Ռուսիոյ, որ Ատրպէյճանի համար գէնքի հիմնական մատակարարն է: Այդուհանդերձ, ոչ Ատրպէյճանը, ոչ Իսրայելը չէին ցանկար ոչ մէկ «ռազմավարական դաշնակցութիւն»: Այդ ռազմավարական, բայց «գործառնութիւն» յարաբերութիւններ են՝ երկու կողմերու համար սահմանափակումներով: Յիշեցնենք, որ այս տարուան Հոկտեմբերին Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանիահուն պաշտօնական այց կը ծրագրէ Ատրպէյճան:

## Հայաստանի Կառավարութիւնը Հալէպէն Հայերու Տարհանման Հարցը չի Քննարկէր

«Հալէպի հրթիռակոծումներու թիրախ յայտնուած հայերու տարահանման հարցը Հայաստանի կառավարութիւնը չի քննարկէր», ըսաւ արտաքին գործերու նախարարութեան խօսնակ Տիգրան Բալայեանը՝ շարունակելով, որ «նախագահ Սերժ Սարգսեանի յանձնարարութեամբ՝ սուրիական հակամարտութեան տուժած բնակիչներուն աջակցելու համար մօտակայ օրերուն երկու ինքնաթիռով մարդասիրական օգնութիւն Սուրիա կ'առաքուի»: Հալէպահայերու թիւը մօտաւոր հաշուարկներով կը կազմէ 8-է 10 հազար: Համացանցի վրայ շատ են քննադատութիւնները Հայաստանի իշխանութիւններու հասցէին, թէ օգնութիւն ուղարկելու փոխարէն պէտք է քայլեր ձեռնարկուին՝ պատերազմի գոտիէն դուրս բերելու կեանքի ու մահուան շեմին ապրող հալէպահայերուն: Հալէպի Ազիզիէ թաղամասը ապրող Մայտա Պաքաբալեանը կը պնդէ, որ «Հայաստանի կառավարութիւնը շատոնց պէտք էր դուրս

բերէր իրենց այստեղէն»: «Մեր հայերուն Եւրոպա կը տանին, տուն կու տան, տեղ կու տան, դրամ կու տան, մեր հայը այս չի կրնար ընել, քիչ մը հայ մնացինք, ով որ կրնար, այստեղէն դուրս եկաւ, բայց մենք՝ մնացածներս, բոլորս ալ օրուան հացը հագիւ կրնանք վատակել եւ հիմա այդ ալ արդէն չկայ», - ըսաւ Պաքաբալեանը: Սուրիոյ խորհրդարանի հալէպահայ պատգամաւոր, Բերիոյ թեմի բանբեր Ժիրայր Ռէյիսեանը կը հակադարձէ, թէ տարահանման կարիք չկայ, ովքեր կը կամենան դուրս գալ Հալէպէն, կրնան այդ ընել: «Որեւէ երկիր, ուր պատերազմ կ'ըլլայ, արդեօք ժողովուրդը կը ձգտի այլ երկիր տեղափոխուիլ: Եւրոպայի մէջ, երկու համաշխարհային պատերազմներու ժամանակ, ժողովուրդը այլ երկիր տեղափոխուեցաւ, ի վերջոյ, երբ երկիրը պատերազմի մէջ է, մարդիկ իրենց տուն, տեղ, գործ, աշխատանք, ամէն ինչ ունին՝ իրենց ակումբները, եկեղեցին, դպրոցը, այս ամէնը թողած ուրիշ երկիր կ'երթան», - ըսաւ Ռէյիսեանը:

## Մինչեւ Տարեվերջ

Շարունակուած էջ 1-էն  
շարունակ՝ Յովիկ Աբրահամեանի վարչապետութեան օրօք, 2014-2015 թրուականներուն, Հայաստանի տնտեսութիւնը շոկ ապրած է,

որու մասին փաստօրէն, նախորդ կառավարութիւնը լուծած է, թէեւ կարէն կարապետեանի կառավարութեան անդամներու զգալի մէկ մասը նախորդ կառավարութեան կազմին մէջ էին:

## Քերի՝ Տակաւին Պայմանները Չեն Ստեղծուած Ղարաբաղեան Հակամարտութեան Կարգաւորման Համար



Պետական քարտուղար ճոն Բերրի կը խօսի միջազգային հարցերու մասին

Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը խոստովանեցաւ, որ Լեռնային Ղարաբաղի սառեցուած հակամարտութեան կարգաւորման, առաջիմ, յստակ ճանապարհ չի տեսներ: Այս մասին պետական քարտուղար ճոն Բերրին յայտարարեց՝ ելոյթ ունենալով Աբեյնի հիմնարկի եւ «Աթլանթիկ» պարբերականի կողմէն Ուաշինկթընի մէջ կատարուող ամենամեայ համաժողովին: Ամերիկեան դիւանագիտութեան առաջնահերթութիւններուն նուիրուած իր ելոյթի ընթացքին Քերրին ընդգծեց որ, Միացեալ Նահանգները երբեք այնքան ներգրաւուած չէ եղած միջազգային քաղաքականութեան մէջ, որ-

քան այսօր: Պետական քարտուղարը նշեց, որ արտաքին յարաբերութիւններու մէջ ԱՄՆ-ը կը պաշտպանէ թէ՛ իր շահերը եւ թէ՛ ամերիկեան արժէքները: Այդ մասին, ան, մասնաւորապէս, խօսեցաւ՝ ներկայացնելով ԱՄՆ-ի դերը Սուրիոյ մէջ: «Մենք շահագրգիռ ենք տարածաշրջանի կայունութեամբ, որովհետեւ մենք պէտք է պայքարինք ծայրայեղականութեան դէմ, որովհետեւ մենք պէտք է թոյլ տանք, որպէսզի այդ երկիրը փլուզուի ու բաժնուի կտորներու՝ բացասաբար ազդելով դրացի երկիրներու վրայ, անոնց կարգին են՝ մեր դաշնակից Իսրայելը, Յորդանանը եւ Եգիպտոսը», - պարզաբանեց Քերրի:

## Թոմաս Տը Վաալ՝ Ատրպէյճանը Մուտք կը Գործէ Անկայունութեան Ժամանակաշրջան

«Ատրպէյճանը մուտք կը գործէ փոփոխութիւններու եւ անկայունութեան ժամանակաշրջան», - համոզուած է Կովկասի խնդիրներով զբաղող ամենահեղինակաւոր արեւմտեան փորձագէտներէն մէկը՝ Թոմաս տը Վաալը: «Քարնեգի» հիմնադրամի կազմին վրայ գետեղուած ծաւալուն յօդուածին մէջ վերլուծաբանը կը նկատէ. - «Նաւթային աղմուկը, որ խթանեց տնտեսութեան աճը, ամրապնդեց պետականութեան հիմքերն ու թոյլ տուաւ Ատրպէյճանին նոր ձեւով հանդէս գալ միջազգային ասպարէզին մէջ, աւարտած է»:



Փորձագետ Թոմաս Տը Վաալ

Տը Վաալի համոզմամբ, այսօր Ատրպէյճանի իշխանութիւնը կանգնած է բաւական լուրջ երկընտրանքի առջեւ՝ ինչպէ՞ս ազատականացնել տնտեսութիւնը առանց քաղաքական բարեփոխումներու: «Այսօր, Ատրպէյճանի գործող կառավարման համակարգը ամենամենատիրականն է 1991-էն ի վեր», - կը նշէ վերլուծաբանը: Անոր խօսքով սակայն, Պաքուի առջեւ ծառայած հիմնական խնդիրներէն մէկը 2000-ականներու կէսերէն կուտակած նաւթային գերշահոյթներու անարդիւնաւէտ տնօրինումն էր: «Նաւթային աղմուկի տարիներուն երկրի ռազմական ելեւմուտը հասաւ տարեկան 4 միլիարդ տոլարի: Անոր հետ մէկտեղ այն ոլորտները, որոնք առանցքային նշանակութիւն ունէին աղքատու-

թեան դէմ պայքարի եւ Ատրպէյճանի բնակչութեան ընկերային ապահովութեան տեսանկիւնէն՝ աւելի քիչ գումար կը ստանային», - կը նշէ վերլուծաբանը: Տը Վաալի խօսքով, Ատրպէյճանը աւելի լուրջ խնդիրներու հանդիպեցաւ միջազգային շուկային մէջ նաւթի գինին կտրուկ անկման պատճառով: Նման պայմաններու մէջ, ըստ բրիտանացի վերլուծաբանի, Ատրպէյճանի իշխանութիւններու համար ցնցումներէն խուսափելը բաւական դժուար պիտի ըլլայ: «Նաւթային աղմուկի աւարտը բարեփոխումներ կը պահանջէ, որոնց իրականացումը անհնարին է՝ առանց քաղաքական կեանքին հանրային լայն զանգուածներու որոշակի մասնակցութեան», - նշեց Թոմաս Տը Վաալ:

### Արսինէ Խանջեանը Միացել է Դիտորդ Դառնալու՝ Սփիւռքին Ուղղուած Կոչին



Արսինէ Խանջեանը բաց նամակ է յղել սփիւռքահայութեանը, որտեղ նա կոչ է անում բոլորին միանալ եւ որպէս կամաւոր դիտորդ հանդէս գալ ՀՀ խորհրդարանական ընտրութիւններին: Որպէս կամաւոր դիտորդ առցանց գրանցուելու համար պէտք է գրել ditord@transparency.am հասցէին: Նամակում մասնաւորապէս ասուած է.

«Մարդու եւ քաղաքացիական իրաւունքները, օրէնքի գերակայութիւնը պաշտպանելը արդիւնաւէտ միջոցներ են, որոնց միջոցով Սփիւռքը կարող է ուղղակիօրէն եւ արդիւնաւէտ կերպով մասնակցել սոցիալական եւ քաղաքական դրական տեղաշարժերին: Պարզ քայլ կը լինի Սփիւռքի կողմից, եթէ անկախ կամաւորներ հաւաքուեն Հայաստանում 2017-ի գարնանը եւ հսկեն բոլոր ընտրատեղամասերը խորհրդարանական ընտրութիւնների ժամանակ: Սա պէտք է լինի իւրաքանչիւր հայի եւ աշխարհասփիւռ կառույցների համար առաջնահերթութիւն՝ երկրում արդար, ազատ եւ թափանցիկ ընտրութիւններ ապահովելու համար:

Բոլոր կամաւորները պէտք է լինեն ոչ կուսակցական դիտորդներ, որոնք մասնակցում են իրենց հաշուին եւ որոնց միակ շահարկը չունի:

Հագրաբնութիւնը եւ պատասխանատուութիւնը ընտրական գործընթացը վերահսկելն է՝ սկսած քուէաթերթիկները տուփի մէջ գցելուց մինչեւ ընտրութիւնների հաշուարկը: Այս ուղղակի եւ կառուցողական միջամտութիւնը կարող է կանխել ընտրակեղծարարութիւնը:

Խորհրդարանական ընտրութիւններին նախորդող ամիսների ընթացքում, ընտրողներին պէտք է տրամադրուի քաղաքացիական-ուսումնական ծրագրեր՝ թափանցիկ ընտրական գործընթացում իրենց մասնակցութեան կարեւորութեան մասին: Նրանք պէտք է հաւատան, որ այս քաղաքացիական պարտքը կարող է եւ պէտք է իրականացուի առանց ընտրակաշառքների եւ իրաւախախտումների:

Կենտրոնական ընտրական յանձնաժողովը միւս կողմից իշխանութիւն ունեցող այն կառույցն է, որը կարող է ապահովել ժողովրդավարական երաշխիքներ՝ որպէս բարի կամքի դրսեւորում: Սա անելով նրանց կարող են վերականգնել վստահութիւնն ընտրողների շրջանում, որ նրանց ձայնը չի կեղծուի եւ նրանց ձայնը կարող է հանգեցնել հիմնարար փոփոխութիւնների:

### Ժամանակն է ճանչնալու Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Գոյութիւնը

«Ղարաբաղի ժողովուրդը չի կրնար պատանդ մնալ Ազրպէյճանի ապակառուցողական քաղաքականութեան եւ պիտի շարունակէ զարգանալ նոյնիսկ ազրպէյճանա-ղարաբաղեան հակամարտութեան չկարգաւորուած ըլլալու պարագային», - յայտարարեց Ղարաբաղի արտ.գործ. նախարար Կարէն Միրզոյեանը՝ ելոյթ ունենալով Եւրախորհրդարանին մէջ, Արցախի հետ բարեկամութեան խումբի ղեկավար՝ Ֆրանք Էնկելի կողմէն, Պելճիքայի խորհրդարանի շէնքին մէջ կազմակերպուած «Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն՝ պետականաշինութեան 25 տարին անկալուն տարածաշրջանի մէջ» խորագրով կլոր սեղան-քննարկման ժամանակ:

Միրզոյեանի խօսքով, չնայած Ղարաբաղեան շարժման խաղաղ եւ օրինական բնոյթին, սկզբէն ի վեր Ազրպէյճանը մերժեց որեւէ երկխօսութիւն եւ դիմեց սպառնալիքներու լեզուին եւ անաբեկման քաղաքականութեան, որ յետագային յանգեցուց լայնածաւալ պատե-

րագմի՝ Լեռնային Ղարաբաղի եւ անոր խաղաղ բնակչութեան դէմ: ԼՂ արտաքին գործերու նախարարը ընդգծեց, որ այսօր ալ Ղարաբաղի ժողովուրդը ստիպուած է բառացիօրէն պաշտպանել երիտասարդ ժողովրդավարութիւնը՝ Լեռնային Ղարաբաղը անցեալին վերադարձնելու Ազրպէյճանի անդադար փորձերու պայմաններում մէջ:

Կարէն Միրզոյեանը նշած է, որ Լեռնային Ղարաբաղը բազմիցս բարձրաձայնած է Ազրպէյճանի կողմէ նոր պատերազմի բացառապէս նախապատրաստութեան մասին, սակայն միջազգային հանրութիւնը անհաղորդ մնաց այդ գոռուչացումներուն:

Ազրպէյճանի անպատեւելիութիւնը, ըստ Միրզոյեանի, յանգեցուց Ապրիլ 2-ին Լեռնային Ղարաբաղի դէմ ռազմական գործողութիւններու վերսկսման:

Այս կապակցութեամբ արտաքին գերատեսչութեան ղեկավարը նշած է, որ Ղարաբաղի իշխանութիւնները մեծապէս կը կարեւորեն

### Թուրք Նախարարը Կը Պահանջէ Փակել Մեծամորի Աթոնակայանը

«Մեծամորի աթոնակայանը վտանգ կը ներկայացնէ դրացի երկիրներու համար եւ պէտք է փակուի», - յայտարարած է Թուրքիոյ ուժաբանութեան եւ բնական պաշարներու նախարար Պերաթ Ալ Պայրաքը Վիեննայի Աթոնային կենսուժի միջազգային գործակալութեան գլխաւոր խորհրդաժողովի ժամանակ:

«Անատոլու» գործակալութեան հաղորդմամբ՝ Ալ Պայրաքը պնդած է, որ Մեծամորի աթոնակայանը 47 տարի առաջ կառուցուած է եւ արդէն շահագործման ենթակայ է: Ան նշած է, որ պաշտպանական կառուցներէն գուրկ աթոնակայանը Թուրքիոյ սահմանէն ընդամէնը 16 քիլոմէթր հեռաւորութեան վրայ կը գտնուի եւ սպառնալիք է ոչ միայն Թուրքիոյ, այլ եւ Հայաստանի միւս դրացի երկիրներուն համար:

Թուրք նախարարը գործակալութեան անդամ երկիրներուն կոչ ըրած է հետեւողական ըլլալ նմանօրինակ աթոնակայաններու հարցով: «Մեծամորի աթոնակայանը պէտք է փակուի: Տարածաշրջանն ու աշխարհը չեն կրնար թոյլ տալ եւս մէկ աթոնային աղէտ Չեռնոպիլէն յետոյ», - յայտարարած է Ալ Պայրաքը:

Թուրքիոյ ուժաբանութեան երիտասարդ նախարարը, որ նախագահ Թայյպ էրտողանի փեսան է, առաջին անգամը չէ, որ կը բարձրաձայնէ Հայկական աթոնակայանը փակելու անհրաժեշտութեան մասին: Անցեալ ապրիլին, երբ խումբ մը ցուցարարներ կը բողոքէին Թուրքիոյ մէջ նոր աթոնակայաններ կառուցելու նախագիծը, Պերաթ Ալ Պայրաքը ցուցարարներուն կոչ ըրած էր



Պերաթ Ալ Պայրաք

իրենց բողոքը ուղղել Հայաստան գտնուող աթոնակայանի դէմ: «Եթէ ձեր կենսուժը ծախսէք Մեծամորի աթոնակայանը բոլոր-տեւում համար, մեծ ծառայութիւն կը մատուցէք Թուրքիոյ, քանի որ ան վտանգ կը ներկայացնէ ողջ տարածաշրջանին համար», - ըսած էր Թուրք նախարարը:

Ի դէպ, Մեծամորի աթոնակայանի շահագործման դէմ բողոքի արշաւ սկսելու կոչերով քանի մը անգամ հանդէս եկած է նաեւ Թուրքիոյ ուժաբանութեան նախորդ նախարար Թաներ Երլտըզը: Վերջինս անցեալ տարուան Մայիսին բնապահպաններուն կոչ ըրած էր բողոքի ցոյց կազմակերպել Իկտիլի մէջ:

Յիշեցնենք, Մեծամորի աթոնակայանը կառուցուած է 1970 թուականին: 1988-ի Սպիտակի աւերիչ երկրաշարժէն յետոյ ան փակուեցաւ, սակայն վերաբացուեցաւ 1995 թուականին:

### Սպանիոյ Մարպեյայի Քաղաքային Խորհուրդը Ծանցեալ Հայոց Ցեղասպանութիւնը



Սեպտեմբեր 30-ին Սպանիոյ Մարպեյայի քաղաքային խորհուրդը ընդունեց տարրական յայտարարութիւնը, որոշումով պաշտօնապէս ճանչցած է եւ դատապարտած է Հայոց ցեղասպանութիւնը: Քուէարկութեան մասնակից բոլոր քաղաքական ուժերը միաձայն կողմ քուէարկեցին այդ յայտարարութեան ընդունման:

Տեղի ունեցած քննարկումներու ընթացքին քաղաքային խորհուրդին մէջ ներկայացուած

կուսակցութիւններու ներկայացուցիչները խօսեցան Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման կարեւորութեան եւ անոր կանխարգելիչ բնոյթի մասին? յատկապէս ժամանակակից աշխարհաքաղաքական զարգացումներու համատեքստին մէջ:

Բանախօսները ընդգծեցին իսպանիոյ կեդրոնական իշխանութեան կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման ու դատապարտման կարեւորութիւնը:

բոլոր մակարդակներուն մէջ, արտաքին քաղաքական կապերու ընդլայնումն ու խորացումը եւ

հ ա ն ր ա պ ե տ ու թ ե ա ն ամբողջացումը միջազգային գործընթացներուն:

### ԸՆԿ. ՀԱՄԲԻԿ ՍԱՐԱՖԵԱՆ .-

## ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱԲԱՏԱՐԻՄ Ե, ԻՐ ՍԿՉԲՈՒՆՔՆԵՐՈՒՆ ԵՒ ՉԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԻՐ ՄՏՆԵԼ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐՈՒ ՄԵՋ

- Պարոն Սարաֆեան, այս օրերուն Հայաստան էք, ուր ներքաղաքական կեանքը լի է իրադարձութիւններով: Կառավարութիւնը գրեթէ ամբողջութեամբ կը փոխուի, սակայն հանրութեան մօտ, այնուամենայնիւ, վստահութիւն չկայ, որ որեւէ բան կը փոխուի մեր երկրին մէջ: Ձեր կարծիքով՝ անձերու փոփոխութեամբ հնարաւոր է հասնիլ իրական փոփոխութիւններու:

Միանշանակ ոչ, որովհետեւ եթէ անձերը կը փոխուին, բայց գործելաոճը նոյնը կը մնայ, որեւէ ձեւով փոփոխութիւն չ'առաջանար: Ճիշդ է, մի քանի դէմքեր կան, որոնք չեն եղած հրապարակի վրայ, այդ մէկը ողջունելի է, որովհետեւ կարելի է յուսալ, որ մարդիկ նոր գաղափարներով հանդէս կու գան, բայց հիմնական հարցը կը մնայ համակարգի ձեւը եւ բովանդակութիւնը, հնարաւորութիւնն ու տուեալ անձանց, ըսենք՝ վարչապետի իրաւասութեան սահմանները: Եթէ ուրիշ երկիրներու մէջ այսպիսի փոփոխութիւն ըլլար, կարելի էր ենթադրել, որ վարչապետը պիտի գայ իր խումբով, լիարժէք իր որոշումով, եւ նախագահէն հաւանութիւն ստանայ իր աշխատանքային համար: Բայց մենք գիտենք, որ այստեղ այդպէս չ'ըլլար, չի յաջողիր, եւ միակ նախաշանք, որ ինչ-որ փոփոխութիւն կարելի է ըլլայ, կ'երեւայ այն ժամանակ, երբ մարդիկ, «օլիգարխները», որոնք երկար ժամանակ սերտացած են այս պետութեան հետ, իսկապէս կը մտնեն հարկային դաշտ, կը տարանջատուին պետական համակարգէն, մենաշնորհային երեւոյթները աստիճանաբար կը վերանան: Պարզ է, որ այս բոլորը մէկ անգամէն չեն ըլլար, բայց եթէ այդ քայլերը չ'առաջարկուին, ոչ մէկ բան կը փոխուի, որովհետեւ վերջին 10 տարիներուն խոստումները կ'ըլլան, ախտորոշումը կատարուած է մի քանի ձեւերով, բայց որեւէ քաղաքական քայլ կամ քաղաքական կամ քի դրսեւորում չէ եղած եւ փոփոխութիւն տեղի չէ ունեցած: Այդ պատճառով ալ ժողովուրդի ու հասարակութեան մօտ վերապահութիւն կայ, թէ որեւէ բան պիտի փոխուի: Յուսանք, որ իսկապէս կը փոխուի, որովհետեւ կը հասնինք հանգրուանի մը, որ բաւական դժուար է Հայաստանի համար: Այս մէկը կը հասկնան բոլորը, նոյնիսկ իրենք:

- Դուք խօսեցաք «օլիգարխներու» մասին, որոնք կը համարուին մեր իշխանութեան յենասիւնը: Անոնք իշխանութեան կ'աջակցին ընտրութիւններու ժամանակ, կը նպաստեն այդ իշխանութիւններուն: Այս պայմաններուն մէջ հնարաւոր կ'ըլլա՞յ անոնց այդ արտօնեալ կարգավիճակէն ետ պահել եւ հարկային ճանապարհով տանիլ օրինական դաշտ: Անոնք այդքան քաղաքական կամ քրոնոս ունենա՞լ:

- Ես օրինակ կրնամ բերել թեմի Ռուզվելթը, որ ԱՄՆ-ի ամենակարգաւորուն նախագահներէն կը համարուի, շատ ուժեղ կամքի տէր, իր նախագահութեան շրջանին այդ մեծ միլիառատէր գող պարոնները, այսինքն՝ Ռոքֆելլերը, Վանտերպիլը, Մորկանը, նոյն կարգավիճակի մէջ էին, ինչի մէջ այսօր Հայաստանի օլիգարխներն են: Այսինքն՝ պետութիւնը կ'աշխատէր իրենց հաշուին, նոյնիսկ

Անցնող օրերուն ՍԴԿԿ Կեդրոնական Վարչութեան Ատենապետ՝ ԸՆԿ. Համբիկ Սարաֆեան աշխատանքային այցով կը գտնուէր Երեւան: Այս առթիւ «Լրագիր» կայքը հարցազրոյց մը ունեցաւ ընկերոջ հետ: Ստորեւ կը ներկայացնենք հարցազրոյցի արեւմտահայերէն տարբերակը:

Երկրի Սահմանադրութեան մէջ փոփոխութիւններ մտցուցին, եւ այդ օրերուն ԱՄՆ գերագոյն դատարանը որոշում ընդունեց, որ «մոնոփոլիա» գոյութիւն չունի, թէեւ յստակ էր, որ մոնոփոլիաներ (առանձնաշնորհում) կային յատկապէս մետաղներու ոլորտին մէջ: Ռուզվելթը կը ցաւ, իր կամքին շնորհիւ գանտնք «բերել» հարկային դաշտ, ընդունուեցաւ օրէնք մը՝ «Շերմանի ակտ» անունով, որ կը գործէ ցայսօր, որով բոլոր առանձնաշնորհումները կը վերացուին, եթէ այդպիսիք կան:

Այսինքն՝ կայ նախադէպ: Եթէ կայ քաղաքական կամք՝ կ'ըլլան փոփոխութիւններ, որովհետեւ շատ յստակ կ'երեւի, թէ ինչ պէտք է ընել, որ այդ երեւոյթը վերանայ: Ի հարկէ, այն մէկ անգամէն վերացնել հնարաւոր չէ, քայլերը պէտք է աստիճանական ըլլան, բայց նաեւ անոր համար խորհրդարանի մէջ լուրջ ուժեր են պէտք, որոնք շահագրգռուած են այդ փոփոխութեամբ: Որովհետեւ այդ նոյն «օլիգարխները», դժբախտաբար, քաղաքական ուժերուն հետ շատ սերտ գործակցութեան մէջ են, նաեւ ինչ-որ ձեւով ու յաճախ նիւթապէս կը սատարեն անոնց: Այսինքն, եթէ այդ համակարգին մէջ ձեղքում պիտի ըլլայ, ապա այդ առաջին դէմքի գործողութիւններով պէտք է սկսի:

- Այս օրերուն Դուք բազմաթիւ հանդիպումներ կ'ունենաք: Ձեր կարծիքով, կա՞յ այդ քաղաքական կամքը եւ այս համակարգը ի վիճակի՞ է ինքն իր դէմ դուրս գալու:

- Այո, բայց խնդիրը այն է, որ ինքն իր դէմ ելլելէ աւելի կարեւոր է երկրի վիճակը: Ի վերջոյ տեղ մը պիտի հասնի, որ այդ նոյն «օլիգարխները» արդէն բոլոր այն միջոցներն ու ներուժը, որոնցմէ կ'օգտուէին, դրամի քանակը, որ որոշակի ժամանակ քաղաքացիներու մօտ աւելի շատ էր, պիտի պակսի եւ սկսի վերանալ, եւ հասկնալի է, որ եթէ այսպէս շարունակեն, հնարաւոր չ'ըլլար հասնիլ անոր, ինչին անոնք կը ձգտին: Միւս կողմէ ալ յստակ է, որ պետութիւնը լուրջ մարտահրաւէրներու առջեւ է, մանաւանդ երկրի ներքին տնտեսական-հասարակական եւ մնացած բոլոր հարցերուն մէջ: Վերջին վեց տարիներուն երկրին մէջ կար ընդդիմադիր ուժ, ընդդիմութիւն, քաղաքական ու հասարակական շերտ, որ բոլոր գործընթացներուն կը մասնակցէր, բայց հիմա այդ շերտը երթալով կը ընդլայնի ու պարտադիր չէ որ, ան ընդդիմադիր ուժերուն կողքին ըլլայ: Ուղղակի այդ մարդիկ, որ տարիներով ինչ-որ ձեւով համակերպած էին այդ կեանքին, հիմա կը հասկնան, որ այլեւս հնարաւոր չէ եւ ինչ-որ բան պէտք է փոխուի: Ասոր պիտի գումարենք դրական երեւոյթ մը՝ երիտասարդներու քաղաքական դաշտ մտնելը, երիտասարդներ, որոնք դեռ չեն այլասերած, իրենց միտքերը չեն աղաւաղուած, ու հիմա փորձ կը կատարուի գանտնք ներքաշել այդ գործընթացներուն մէջ: Անոնք պէտք է

փոփոխութիւններու երթան, որովհետեւ այն բոլոր բարքերը, ամենավատ սովորութիւնները, մտածելակերպը, աշխատելաոճը, որ խորհրդային Միութենէն մնաց, եթէ չփոխուի, ոչ մէկ բան պիտի փոխուի, չպարային ինչ-որ բաներ կ'ըլլան, յետոյ նորէն կը շարունակուի հինը: Բայց ինչ-որ ձեւով բան մը պիտի կատարուի, որովհետեւ բոլորը կը հասկնան, որ Հայաստանին այսօր արմատական փոփոխութիւններ են պէտք: Երբ ընդդիմադիրներու եւ իշխանութիւններու ձառեւը կը լսես, կը մտածես՝ ինչ լաւ բաներ կ'ըսեն, ես իւրաքանչիւր նախադասութեան տակ կը ստորագրէի, բայց կարեւորը խօսքերէն գործի անցնելու եղանակն է:

- Պարոն Սարաֆեան, յուլիսեան զարգացումներէն ետք սփիւռքը կարծես «արթնացման» ճանցներ ցոյց տուաւ: Մասնաւորապէս, Գանատահայ դերասանուհի Արսիճէ Խանճեան, որ այդ օրերուն այստեղ էր, կը խօսէր համահայկական ֆորում ստեղծելու գաղափարի մասին, որուն շնորհիւ այսուհետեւ սփիւռքը կրաւորական կեցուածք պիտի չունենայ եւ ներգրաւուի Հայաստանի ներքաղաքական կեանքի մէջ եւ փորձէ ազդեցութիւն ունենալ: Դուք ինչպէ՞ս կը գնահատէք նման գաղափարը եւ որքանո՞վ կ'ենտունան է այն: Սիւս կ'ըսէր, օրերս Ռուբէն Վարդանեանը կ'ըսէր, որ սփիւռքը «կեթօրի» վերածուած է եւ պէտք է այդ վիճակէն դուրս գայ:

- Ես չեմ գիտեր, թէ Ռուբէն Վարդանեանը ինչու այդպէս կ'ենթադրէ, բայց իրականութեան մէջ ժիշտ հակառակ գործընթացը տեղի կ'ունենայ: Բոլոր գաղթօճախները կեթթոյացումն են կ'անցնին դէպի աւելի բաց հասարակութիւն, եւ սա իր մէջ վտանգներ կը ներառէ, ըսենք, հայապահպանման եւ այլ հարցերով: Ես չեմ գիտեր, թէ ան որ քաղաքին մասին կը խօսի, բայց այդ երեւոյթը հիմա համատարած է: Օրինակ՝ ԱՄՆ-ի մէջ այդ մէկը միշտ եղած է, որովհետեւ Ամերիկայի հայերը կ'ապրին տարածուած եւ անհար է կեթթոյի հոգեբանութիւն ունենալ: Այստեղ չկան թաղեր, ուր միայն հայեր կ'ապրին: Բացառութիւն է Կլիֆթոնը, բայց այստեղ առաւելագոյնը կ'ապրի ընդամենը 80-85 հազար մարդ: Ասոր կը գումարուի նաեւ Միջին Արեւելքը, ուր տեղի կ'ունենայ նոյն երեւոյթը: Մեր սերունդը ջրբաժանն էր կեթթոյին դէպի բաց հասարակութիւն: Մեզ յաջորդող սերունդը շատ աւելի ազատամիտ է, ու այդ իր մէջ նաեւ վտանգ կը պարունակէ, որովհետեւ շատ քիչ են խառն ամուսնութիւնները, անոնք արդէն չունին հոգեբանական այդ զսպող մէքանիզմները, որ մտածեն՝ պիտի չամուսնանանք օտարի հետ: Ծատեր կան, որոնց համար բոլորովին կարեւոր է, թէ որո՞ւ հետ կ'ամուսնանան:

Ինչ կը վերաբերի համասփիւռքեան կամ համահայկական ֆորում ստեղծելու գաղափարին, Լոս Անճելըսի հայութիւնը, ի



տարբերութիւն մնացեալ այլ համայնքներու, կը համարուի ամենաքաղաքականացուած համայնքը՝ շնորհիւ Հայաստանէն արտագաղթած մեծ թիւով մեր հայրենակիցներուն, եւ անոնց համար Հայաստանի առօրեան՝ իրենց առօրեան է: Անոնք դեռ ունին կապեր, եւ ընտանիքի անդամներ, ֆիզիքապէս հայրենիքի մէջ չեն, բայց հոգեպէս դեռ այստեղ կը գտնուին, ինչը դրսեւորուած է տարիներ շարունակ՝ 2003-էն սկսեալ: Բայց այստեղ կարեւոր խնդիր մը կայ, որ մարդիկ երբեմն կը մոռնան. Սփիւռքը երբեք չի կրնար շարժիչ ուժ ըլլալ Հայաստանի մէջ փոփոխութիւններու հասնելու համար: Թերեւս կրնայ օժանդակող ըլլալ, նեցուկ՝ քաղաքական փոփոխութիւններու, բայց ակնկալել, որ սփիւռքը ինչ-որ ձեւով կրնայ ներազդել Հայաստանի ներքաղաքական ինքնաշնորհում վրայ՝ քիչ մը երազային եւ ոչ իրական մօտեցում է: Ըսեմ ինչու. որովհետեւ սփիւռքի համար միակ լծակը, որ կայ՝ անընդհատ դուրսէն այնքան աղմուկ ընելն է, որպէսզի մեծ երկիրները ճշում բանեցնելու Հայաստանի վրայ: Բայց այդ մէկը որքանո՞վ արդիւնաւէտ է: Թերեւս մէկ հարցի մը համար կարելի է, բայց այդ դարձնել գործողութիւններու հիմք ու սկսիլ ատորմով ինչ-որ ձեւով փորձել փոփոխութիւն առաջացնել, հնարաւոր չէ: Միակ ձեւը, որ ես կը պատկերացնեմ, որ որոշ ժամանակ տեղի ունեցաւ, 2007-2008 թուականներու ժամանակահատուածն էր, երբ Հայաստանի քաղաքացիները այստեղ չափազանց մեծ աշխուժութիւն կը ցուցաբերէին, եւ սփիւռքի մէջ մարդիկ աշակից էին անոնց: Սա հնարաւոր է ընել, բայց ատկէ դուրս ակնկալել, որ կարելի է աւելին ընել, չեմ կարծեր: Սփիւռքը կրնայ մեծ ծառայութիւն մատուցել, եթէ սփիւռքի նոր ֆորումներու մէջ կամ քաղաքական միջոցառումներու ընթացքին պատրաստուին համակարգի փոփոխութեան իսկական ծրագիրներ, եւ մեր այստեղի երիտասարդները կարենան հասկնալ, թէ ինչպէս պէտք է կերտել քաղաքացիական հասարակութիւն: Այն արժէքները, փորձը, որ կան դուրսը, հասցնել Հայաստանի հասարակութեան: Սա կարելի է ընել, բայց մտածել, որ սփիւռքը կրնայ ուժ դառնալ, եւ այդ ուժը կրնայ ճնշել իշխանութիւններուն, որպէսզի փոփոխութիւններու երթան, ես իրատեսական չեմ համարեր:

- Այսինքն՝ համահայկական ֆորումի գաղափարը ձեզի համար ըն-

# ԸՆԿ. ԱԼԵԽԱ ՔԵՕՉԿԵՐԵԱՆ ԵԼՈՅԹ ՈՒՆԵՑԱԼ «ԹՈՒՐՔ ՅԱՌԱՋԱՊԷՄ ՄՈՒԼՈՐԱԿԱՆՈՒՔԻՆԸ ԵՆ ԳՆՃԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿԳՈՒՔԻՆԸ» ՆԻՒՔԻՆ ՇՈՒՐՋ

Շարունակուած էջ 1-էն

Թեամբ հետեւեցան դասախօսութեան ու իրենց հարցումներով մասնակից եղան ասուլիսին:

Օրուայ հանդիսավար՝ Ընկերութեան Ծովիկ Քէրոզլեան իր բացման խօսքին մէջ յատկապէս ըսաւ, «Այս օրերուն կը խօսուի ցեղասպանութեան հատուցման եւ մեր մէկ ու կէս միլիոն սրբադատուած հայնահատակներու արդար դատի լուծման այլազան ձեւերու մասին:

«Մեր կարծիքով, մեր արդար դատի լուծման գլխաւոր լծակներէն մին պէտք է հանդիսանայ, նոյն ինքն թուրք ժողովուրդը, յատկապէս անոր գիտակից ու մտաւորական խաւը, որ օր ըստ օրէ կազմաւորուող դեմոկրատական հիմունքներով ճամբայ ելած, երկրի յառաջդիմական կազմակերպութիւններն են:

Հանդիսավարը ներկայացնելով հիւր դասախօսի կենսագրական գիծերը զինք հրաւիրեց բեմ:

Ընկեր Ալէքսան նախ շնորհակալութիւն յայտնեց ԱՄՆ Արեւմտեան Շրջանի Վարիչ Մարմինն այս առիթը ստեղծելուն համար: Ան իր խօսքը սկսաւ սահմանելով մեր գործընկերները. «Թուրքիոյ յառաջողէմ մտաւորականութիւն ըսելով մենք նկատի ունինք այն բոլոր մտաւորականները ովքեր, առանց վերապահութեան ճանչցած են Հայոց Յեղասպանութիւնը եւ պատրաստ են մեզի աստար կանգնելու՝ մեր պահանջատիրութեան մէջ»:

Բանախօսը բացատրելով թէ ինչպէս սկսած են այս յարաբերութիւնները, յայտնեց որ չորս տարի առաջ էր, երբ յանկարծ կայքերէն մէկուն վրայ քսաններուն մասին թուրքերէն լեզուով գրուած յօդուած մը գտած է եւ ծայրը գտնելով, հեղինակին հետ կապի մէջ մտած է առանց բացայայտելու իր իսկական ինքնութիւնը. «Այս ընթացքին Պէյրութ այցելութեան եկած էին Թուրքիոյ ասորիները ներկայացնող պատուիրակութիւն մը, որոնց հետ ջերմ գրոց մը ունենալէ ետք, Պոլսոյ մէջ թուրքիկ ցոյց մը կատարելու միտքը մը յղացանք. իր օրին ծիծաղելի թուացող «երագը» իրականութիւն դարձաւ՝ երկու տարի ետք, երբ անակնկալ հրաւէր մը մեզի տարաւ Պոլիս՝ Պայագիտ հրապարակ», ըսաւ Ընկ. Քէօչկերեան:

Անդրադառնալով այդ նախաձեռնութեան արդիւնքներուն ան

նշեց. «Մինչեւ երեք տարի առաջ Փարամագի եւ 19 ընկերներու սխրագործութեան արժեւորումը սահմանափակուած էր միայն հայկական շրջանակներով. Սակայն այսօր Փարամագի անունը դարձած է կրօնամոլութեան եւ յետադիմութեան դէմ պայքարի խորհրդանիշ. Ասոր վառ օրինակը 2014-ի Հոկտեմբերին Քոպանիի Միշթէնուր կոչուած բլուրին վրայ գոհուած մարտիկն է, որ իր յեղափոխական անուն որպէս՝ ընտրած էր «Փարամագ-Գլայաչ» անունը: Նահատակին ծնողքին հետ մեր հանդիպման ժամանակ մայրը ըսաւ, որդիս Սուպհի Նէժաթ հիացած էր Փարամագի կերպարով եւ այդ պատճառով, երբ մեկնեցաւ իր համարողկային պարտքը կատարելու, իր անունը մարտական անունը առաւ երկու իրաւագրկուած ժողովուրդներէն»:

Դասախօսը խօսեցաւ յայտնի թուրք մտաւորական Քաստիւր Աքընի գրած եւ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին նուիրուած՝ «Փարամագ Հայ Յեղափոխականը» գիրքին, որ 4րդ տպագրութեամբ դասուած է թուրքիոյ մէջ վաճառք արձանագրած 10 գիրքերու շարքին:

«Այսօր նոր պատմութիւն մը սկսած է գրուիլ Թուրքիոյ մէջ: Փոխուած են ընկերվարական շարժման առաջատարներուն շարքը, այսօր Փարամագ եւ իր ընկերները դարձած են այդ շարժման առաջին նահատակներուն շարքին:

Բանախօսը շարունակելով Հայոց Յեղասպանութեան 100 ամեակի հուշակագրի հայ-թուրք յարաբերութիւններուն առնչուող բաժիններուն ինչպէս նաեւ, Թուրքիոյ մէջ տեղի ունեցած զարգացումներուն եւ այնտեղ գործող՝ հակամարտ ուժերու յարաբերութիւններուն ըսաւ: «Այս հուշակագրով մեր ազգային պահանջատիրութեան քաղաքական ասպարէզին մէջ նոր դաշտ մը բացուած է, այդ Թուրքիայի հանրապետութիւնն է: Այդտեղ մեր թշնամիներու մեծ ոհմակ մը կայ էրտողանի կրօնամոլ եւ Պահզէլիի ազգայնամոլ ոհմակներու գլխաւորութեամբ: Ասոնց դիմաց մեր բնական դաշնակիցներն են ժողովուրդներու հաւասարութեան ձգտող, փոքրամասնութիւններու իրաւունքները պաշտպանող բոլոր ուժերը եւ մենք որպէս հնչակեաններ բարոյական պարտք կը համարենք զօրակցիլ անոնց եւ թիկունք կենալ»:



- Ես կուսակցական մը չեմ ըսի եւ աւելցուցի, թէ կարօ Արմէնեանը գիտ չրաւիրած էր:

- Ուրեմն դուք ալ անկուսակցականներ կը ներկայացնէք, ըսաւ:

Ժողովին նպատակն էր այդ գիրքը հրատարակ չհանել, թէեւ քանի մը հատորներ ձեռքէ ձեռք ստացողներ եղած էին:

- «Հայաստան թէեւ համայնավարութեան տակ կը տքար, սակայն մեր հայրենիքն է» կ'ըսէին երիտասարդները:

Բոլոր երիտասարդները գանազան կարծիքներ յայտնեցին, բայց վճռեցին գիրքին ցրուած կեցնել:

Հանգամանաւոր հեինակը շուկայ կ'ուզէր իջեցնել, բայց երիտասարդները կը սպառնային արգելք հանդիսանալ:

Այդ երեկոյ կրակոտ ճառեր արտասանուեցան, գործնական քայլեր առնելու համար, եւ որոշուեցաւ չվախնալ ու նոյնիսկ գրավաճառները ազդարարել, որ այդ գիրքը չվաճառեն:

Ձեռնոցները նետուած էին:

Որոշուեալ այդ գիրքի հանգամանաւոր հեղինակին մօտ երթալ: Ձիս նշանակեցին իբրեւ բանագնաց եւ շեշտեցին մեր

հեղինակին՝ այս ժողովի ներկայներուն անունները չբացայայտեմ:

Գացի հանգամանաւոր հեղինակին մօտ:

Երկար բարակ խօսիլը աւելորդ նկատեցի ուստի պարզապէս ըսի, որ աւելի լաւ պիտի ըլլար եթէ գիրքը տպուելէն առաջ բարե-կամներու կարծիքն ալ ունենար:

Այս մէկը որդեգրած էին Կաթողիկոսարանի տպարանէն ներս, երբ այդ տարիներուն ես անձնապէս կ'օգնէի խմբագիր Սիմոն Սիմոնեանին:

Գիրքին հեղինակը այս խօսակցութեանս ուշադիր կը հետեւէր:

Վերջապէս ըսաւ.

- Պարոն կը տեսնեմ որ փորձառու մէկը կ'երեւիս, ես գիրքերու ծախսերը կ'ուզեմ հանել...

- Հոգ չէ ըսի. - սեպէ, որ գազինօ գացած ես, ու «խումար»ին մէջ կորսնցուցած այդ գումարը:

- Դուս փաստաբան ես եղեր. - ըսաւ ինձի:

- Ո՛չ, ըսի, ես պարզապէս ժողովին ազդարարութիւնը բերած եմ ձեզի: Դուք Վազգէն Շուշանեանը կը ճանչնա՞ք:

- Իմ ամենէն սիրած գրողն է, ըսաւ արագ մը:

- Ուրեմն ձեզի ըսեմ, որ Վազգէն Շուշանեան 30-ական թուականներուն «Բիւրոյա-կաններուն» հետեւեալը գրած էր ըսելով, թէ.

- «Հայաստանի դէմ մի խօսիք, մեր երկիրը հով մը համայնավարութիւնը բերաւ, օր մըն ալ նոյն հովը գայն կը տանի, բայց մեր հայրենիքը կը մնայ»:

- Ձէիք գիտեր, այդ ալ գիտցայ, տղան, դուն ալ փաստաբանութիւն սորվիր: Ինձի համոզեցիր, ըսաւ հեղինակը: Այո, սեպեմ, որ գազինօ գացած եմ: Այդ գիրքերը աչքիդ առաջ պիտի այրեմ: Գնա, տղոց այս լաւ լուրը տար, անոնք բոլորն ալ իմ ընկերներս են եւ այդպէս ալ կը մնան... բայց դո՛ւն կուսակցական մի ըլլար, մեր գործին չես գար...:

Իր խօսքը յարգեցի, մինչեւ այս տարիքս:

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՉՈՐԱՑԱԾ ԾԱՌԻ Է ՆՄԱՆ

Ռ. ԿՈՐԻՒՆ

Ընկերներէրցս մէկը՝ Մատուրը ինձ հրաւիրել էր արագուշտի (արգանակ) ուտելու, պայմանաւորուել էինք յետ միջօրէի ժամի երեքին: Օրը կիրակի էր, ամառային տաք օր, ինքնաշարժս շէնքին կից փողոցում կանգնեցրի եւ քայլերս ուղղեցի դէպի մուտքը, արտաքինից նորաոճ երեք յարկանի շէնք, փողոցի մէկ block-ում տեղաւորուած, մուտքի մօտ ոմն մեծահասակ գաւազանի օգնութեամբ մօտեցաւ ինձ ասելով.

- Հայրենակի՛ց, կարելի է ձեր հետ ներս մտնե՞լ, երկար ժամանակ է այստեղ սպասում եմ, ելեկտրական սարքաւորման ծանօթ չեմ, չգիտեմ ինչպէս դուռը բացել,

- Զօրեղբայ՛ր, ո՞ւր ես գնում, ո՞ւմ բնակարանը:

- Գնում եմ Մատուրի մօտ:

- Ա՛յ Զօրեղբայր, ես էլ եմ նրա մօտ գնում, գուցէ՞ դու էլ ես հրաւիրուած:

- Այո՛, ինձ էլ է հրաւիրել, մենք համագիւղացիներ ենք եւ վաղեմի ծանօթներ:

Բնակարանի համարը ցուցանակի վրայ հաւաքեցի, ապա գանգ տուի դուռը բացել: Դուռը բացուեց, նա ինձ հետ դանդաղ քայլերով ներս մտաւ:

- Զօրեղբայ՛ր, ե՛կ, վերելակով բարձրանանք:

Վերելակը բերանը բաց երկուսիս իր մէջ առաւ եւ դէպի վեր սլացաւ, երրորդ յարկում կանգ առաւ, ուր գտնուեմ էր Մատուրի բնակարանը: Նա որպէս տարեց իրեն բախտ էր վիճակուել բնակարան ստանալ տարեցների (senior) շէնքում: Ոլորապտոյտ, երկար միջանցքը անցնելով հասանք նրա բնակարանը, թակոցի ձայնով դուռը բացուեց, Մատուրը մեզ ներս հրաւիրեց:

Երկու նորամուտներս մաքուր ու դասաւորուած սենեակում տեղ գրաւեցինք սեղանի շուրջը: Մատուրը իր տարեց հասակում աշխուժ եւ գործունեայ է, ծոյլ չէ, բնակարանի մաքրութեան եւ այլ գործերին ինք անձամբ է հոգ տանում: Սա իմ առաջին անգամը չէ այստեղ գտուելուս, մի քանի անգամ եղել եմ առիթներով:

Շէնքում բաւական թուով մեծահասակներ են ապրում, ոմանք՝ ամուսիններ, ոմանք՝ էլ ամուրի, ոմանք աշխուժ եւ ոմանք էլ ընկճուած ու մաշուած, սակայն ոտքի վրայ: Մեծահասակներ հերթակախօրէյն գալիս են իրենց կեանքի վերջին տարիները անցնելու առանձնութեան մէջ պարփակուած մի սենեականոց յարմարաւէտ բնակարանում, շատերը պարտաւորուած իրենց գաւակների անտարբերութեան հետեւանքով են մեկուսանում: Պէտք է ասել, որ կան գաւակներ, որոնք չեն հանդուրժում ծնողների ներկայութիւնը մէկ առաստաղի ներքոյ եւ նոյնիսկ մէկ բակի տարածքում իբր իրենց եւ ծնողների հանգստաւէտ կեանքի մասին մտածելով: Նրանք անգիտանում են, որ ծնողի հետ միասնական կեանքը կարեւոր է սերնդապահութեան, ազգային արժէքների եւ սովորութիւնների փոխանցման տեսանկիւնից:

Մտորների ներկայութիւնը ընտանեկան շրջանակում իր հետ բերում է Աստուածային օրհնութիւնը գաւակների յաջողութեան, երջանակութեան եւ նրանց փորձանքներից զերծ պահելու համար:

Մեր ընկերը նոյնպէս մենակ է ապրում, կնոջ մահուան մէկ տարին չի լրացել, նա ունի գաւակներ, որոնք իրենց ընտանիքներով առանձին են ապրում:

Մտորներին մեկուսացնել, այսինքն մատաղ սերնդին կտրել մեր մշակույթից եւ սովորութիւններից եւ դէպի այլասերման մղել: Այս հոգեբանութեամբ մեր երիտասարդ ամուսինները ճակատագրական սխալ են թոյլ տալիս, թողը յետագային իրենց աչքերը կը զնայ, սխալ ապրելակերպը յետոյ ցոյց կը տայ իրեն, որն արդէն ուշ է:

Ուտելիքները մէկ-մէկ շարուեցին սեղանի վրայ օգելից խմիչքի հետ միասին:

- Տղե՛րք ջան, ձե՛զ տեսնեմ, մի՛ քաշուէք, Մատուրը մեզ հրաւիրեց կեր ու խումի աւելացնելով:

- Աբգուշտը լաւ, բոլ մսով եմ էփել, քանի ժամեր օջախի վրայ դրած միսը հալուել դարձել է հալուա, դե՛հ, ձեզ տեսնեմ:

Նա մեզ մղում էր բաղեան (խորունկ աման) լեցուն լցնել եւ բրդել:

Կերակուրի բուրմուռնքով հմայուած անցայ գործողութեան:

- Տղե՛րք, երեք տեսակ խմիչք ունեմ՝ գինի, կոնեակ եւ օղի, Մատուրն էր մատնանշելով խմիչքների տեսակները:

- Ես կոնեակից կը խմեմ, մարդ հայկական կոնեակը չի թողնի ուրիշ բան խմի, չեն ասի՞, որ էդ մարդը ճաշակ չունի՞, անպայման կ'ասեն: Դիմեցի Մատուրին կոնեակ լցնի ինձ համար:

Երեք բաժակները չրխկացնելով հանդիպեցին մէկ կէտում սրտուղղուած բարի մաղթանքներով:

Ընկերովի կեանքը քաղցր է, ի մասնաւորի երբ մէկ սեղանի շուրջը բոլորած ուտում, խմում, երգում եւ կենացներով սրտերը առաւել կապում իրար, ժողովրդական առածն ասում է՝ ընկերովի մահը նոյնպէս ուրախութիւն է:

Սեղանի շուրջը զբաղուած էինք ուտելով եւ զրուցելով, Զօրեղբօր ներկայութիւնը ինձ հետաքրքրեց ճանաչել նրան եւ իմանալ թէ ով է նա, այդ նպատակով դիմեցի Մատուրին:

- Սիրելի Մատուր, ուրախ եմ մեզ ընկերացել է հօրեղբայրը, առաջին անգամ է նրան հանդիպում եմ, կարելի է իրեն ներկայացնել:

- Նա իմ վաղեմի ընկերներից է՝ անունը Արտաւազը, երկար կեանք ենք անցկացրել իրար հետ գիւղից սկսեալ մինչեւ թէհրան:

Նա իմ դիմացն էր նստել, իւրաչատուկ դէմքով սպիտակամորթ նման ուստի, աչքերը երկնագոյն՝ բոյով նիհար ու երկար, առաջին հայեացքից էն տպաւորութիւնն ստացայ, թէ նա ուսաստանից պիտի եկած լինի, բայց հարց ու պատասխանների ընդմէջէն պարզուեց որ իրանահայ ծնողից է սերել Փերիոյ գաւառից, երկու որդիների հայր, նրանք իրենց ընտանիքներով՝ մէկը Իրանում, իսկ միւսը այստեղ Ամերիկայում:

- Կարելի է պրն. Արտաւազը իմանալ ե՞րբ էք եկել Ամերիկա.

- 2015-ի վերջերը, արդէն իսկ մէկ տարին ես ու կինս բոլորել ենք:

Նա պատմեց անցեալից, գործից եւ զբաղմունքից թեհրանում, սակայն անհանգիստ էր այստեղ Ամերիկայում մենակութիւնից եւ

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՁԱՊԱՀԵԱՆԻՆ
Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

# ՀԱՅՈՑ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՀԱԻԱՏՔԻ, ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ, ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

## ՊՕՐՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Օգոստոս ու Սեպտեմբեր ամիսների ընթացքում, ՇԱՆԹ հեռուստատեսությունում, տեղի էր ունեցել Հայոց պատմության հետաքրքիր իրադարձությունների մասին քառակողմ քննարկում: Այդ հանդիպման ժամանակ կատարվել էին իւրաքանչիւր մեկնաբանություններ: Ակադեմիական վիճաբանություններ: Ակադեմիական վիճաբանություններ: Ակադեմիական վիճաբանություններ: Ակադեմիական վիճաբանություններ: Ակադեմիական վիճաբանություններ:

Հանդիպման մասնակիցներից մի վարդապետ, խանդավառ խօսքով յայտարարել, որ «Քրիստոնէական գաղափարախօսություն հիմք» Հայոց նախնիների հեթանոսական հաւատքն է, տեսնում էին այն՝ ինչ իրենց նախնիներն էին պաշտել: Քրիստոնէական հաւատքի Հայ սպասաւորողի կողմից նման համարձակ բնորոշում՝ երբեք չի եղել: Այդ իր անձնական համոզմունքն էր, թէ՛ նպատակադրուել Հայ ժողովուրդի հոգիներում առաւել ամրապնդելու քրիստոնէական հաւատքը: Հայ եկեղեցին հեթանոս էր անուանել նրանց՝ ովքեր Քրիստոնէայ հաւատքից բացի ուրիշ հաւատք էին դաւանել: Բոլոր կրօններն էլ իրենցից առաջ ընդունուածներն էր որոշ դրոյթներ են ներառել: Քրիստոնէություն «Հոգու անմահութիւն» փոխառաւորութեան գաղափարը Պարսկաստանի Զրահադաշտական կրօնն էր դաւանել: Վարդապետի խօսքը, որ քրիստոնէություն գաղափարախօսություն հիմքը Արմինա-Հայաստանի արմինների նախնի հաւատքի հիմքն է, առիթ է տալիս մտածելու, որ Արմինա-Հայր ամուր փառել էր նոր հաւատքին, այն դարձրել ազգային, երկու հզօր կայսրությունների միջև իրենց ցեղը ձուլումից ազատ կացուցանելու: Վարդապետը լուեց, երբ իրեն հարց տուեցին՝ ինչո՞ւ երկրում փլեցին այն, ինչ հին հաւատքն էր դաւանել, նոյնիսկ՝ ԳԻՐ: Չհակաճառեց...: Արտագին տարածա-քաղաքական նկատառումներով էր այն, Բիւզանդեան կործանելով Հայոց արիական մշակույթը ցանկանում էր չունական քաղաքակրթութիւն ներմուծել Հայաստան, տիրել Պարսկաստանի բաժնին էլ:

Ըստ պատմաբան Մարտիրոս Գալուքճեանի, հայերի Աստուածը շատ խոր հնութեան հետք ունի, այն եղել է հայերի հնագոյն աստուածությունը՝ կրակի աստուածութիւնը: Աշտու-աշ դիցանունը նախնական արմինների բառ է, այն կապ է ունեցել ասուրա-բաբելական իշատու՝ «կրակ», բառի հետ: Աստուածը, ազգային գլխաւոր աստուածութիւն՝ Հայկ-Նալդին էր, հայոց աստուածների մեծագոյնը: Պարսկաստանի Աքեմենեանների ժամանակ Արմինա-Հայաստան է ներմուծուել Ահուրա-Մազդան, Արմինա-Հայաստանի դիցարանում Աստուածի տեղն էր բռնել, Ահուրան փոխելով Արա դիցանունին՝ կոչել Արա-մազդ: Արա-մազդ: Քրիստոնէություն ժամանակ Հայոց Աստուածը նոյնացուել է Եհովայ -ի հետ: Աստուած (Աստուած) անունը, որպէս կրակի բնիկ աստուածութիւն, կապուած է աստու (կրակ) բառի եւ Ուր-աշտու (Ուր-Արտու) երկրի, կրակապաշտութեան

կեդրոն՝ Աշ-տիշատ քաղաքի անունան հետ: Աստուած անունը յիշուած է Հայասա պետութեան աշտուաշ դիցանունում: Հայոց հեթանոսական կրօնը՝ արեւելքի հազարամեայ իմաստութիւնն է ամփոփում:

Հանդիպման մասնակից վարդապետը խօսել էր նաեւ, որ Հայաստանի թագաւորութեան կործանումը ու յետագայ դարերի դէպքերի պատասխանատուն անիրաւի համարում են Հայաստանում քրիստոնէություն ընդունումը: Անթագաւոր Հայաստանում եւ այլուր՝ եկեղեցին էր առաջնորդի դեր կատարել, Հայ մշակույթը ծաղկել է ոսկեդարի քրիստոնէայ վարդապետների կողմից եւ յետոյ էլ վանքերում: Սակայն, Հայ կղերը չէ՞ր, որ նախարարական տներին հետ տիրացել երկրի հողին, դարձել աւատատէր, ճորտացրել նրա վրայ աշխատող շինականներին, իւրացրել նրա արարումը, Հայու հոգում մարել ցեղի նախնիների հաւատքի իմաստութիւնը, դարձրել ստրկամիտ: Տարօն աշխարհը պատկանել էր Գրիգոր Լուսաւորչի տա-

նը, ժառանգել Մամիկոնեաններին: Անիի Գետադարձ կաթողիկոսը, անարգ իշխան Վեստ Սարգիսի հետ համոզել Բագրատունի երիտասարդ թագաւոր Գագիկին՝ կայսրի պահանջով Բիւզանդիա գնալ, հաստատ իմանալով, որ նրան ետ չէին ճամբի, որ իրենք էլ Անիի բանալիները յանձնէին Յոյնին: Յոյնը փրեց արեւմուտքի իր պարիսպը, մարեց Հայ թագաւորութիւնը, նրա ներուժը, Արմինա-Հայաստան հզօր աշխարհը, քաղաքակրթութեան այդ կղզեակը, հեղեղուեց արեւելքի դաժան ցեղերով, հեղեղուեց Բիւզանդիոնը, հիմա էլ արեւմուտքն են հեղեղում: Կղերականութիւնը չէ՞ր, որ «Տիրոջը հնագանդութիւն» քարոզեց, աւանդեց սիրել թշնամուն, ներել նրան...: Զինուորի փոխարէն ճգնաւոր դարձան, Արմինա-Հայուն ստիպեցին աղօթել, փրկութիւն աղաչել՝ «Աներեւոյթից» եւ փրեցին իրենց էլ, երկիրն էլ: Խամբեց շինականի հոգում կուռի ոգին, մինչեւ որ Հայկի զարմից քաջեր գային, «Սուր ու գէնք» տային Հայ գիւղացուն, թշնա-

մու դէմ կուռ լինէր: Նախարարութիւններ, Արմինա-Ուրարտուի «Բիա»-ներն էին, որոնք Արամ-Արամէ թագաւորի թելադրանքով համադաշնակցային պետութիւն էին ստեղծել, դարեր կուռ տուել հզօր ու անչափ դաժան Ասորեստանի դէմ, արգելակել նրա թափանցումը հիւսիս ու արեւմուտքի երկրներ... փրկեցին արեւմուտքը սեմականացումից: Արմինա-Հայերի համաշխարհային քաղաքակրթութեան մատուցած յիշատակութեան արժանի բազում արարումներից էր նաեւ այդ: Երուանդունիների իշխանութեան ատեն Բիա-ները պահպանեցին իրենց իշխանութիւնը, շատերը «Նախարարութիւն» անունուեցին, մեհեանների փոխարէն տաճարներ պատեցին իրենց տիրութիւններում: Նախարարութիւններն էին որ կազմեցին հայկական պետականութեան հիմքը եւ Հայ ազնուականութիւնը:

Պարսկաստանի նենգ, անբարոյ Յագկերտ թագաւորը, հրովարտակ էր ուղարկել Հայոց երկիր, իր հպատակները պաշտէին այն կրօնը, որ ինքն էր պաշտում: Մարգարանական անթագաւոր Հայաստան: Մո-

Շար.ը էջ 19

**FRIENDS OF MARIA JACOBSEN**

**PRESENTS**

**A CONCERT IN MEMORY OF MARIA JACOBSEN**  
**WHO SAVED THOUSANDS OF ARMENIAN GENOCIDE ORPHANS**

**Conducted by MAESTRO SIR VARTAN MELKONIAN**

**Conductor of the Royal Philharmonic Orchestra, London**

**Performed by The ISM Production's Chamber Orchestra**

**Friday, October 21, 2016, 7:30 pm**  
**Glendale Presbyterian Church**  
**125 South Louise St. Glendale, CA 91205**

**Under the auspices of**  
**The Western Prelacy of the Armenian Apostolic Church**  
**The Western Diocese of the Armenian Apostolic Church**  
**Armenian Catholic Exarchate**  
**Armenian Evangelical Union of North America**

**DONATION: \$ 50/ \$ 35 • STUDENTS: FREE with ID**

**FOR TICKET RESERVATIONS CONTACT:**  
Dr. Garbis Der Yeghiayan – mashdots@aol.com – (818) 523-3353  
Rev. Joe Matossian – joe@matossians.net – (818) 384-6885  
Hagop Hovanesyan – h.hovanesyan@gmail.com – (818) 590-8668

**itsmyseat.com • (818) 538-4911**

Ani grocery • (818) 241-7229    Unique market • (818) 945-5774    Perfume & Gift Gallery • (818) 502-1825  
Abril bookstore • (818) 243-4112    Berj bookstore • (818) 244-3830    Sardarabad bookstore • (818) 500-0790  
Barseghian Photo & Records (Hollywood) • (818) 664-3365    Sis Bakery (N. Hollywood) • (818) 760-7520  
Flor De Café Bakery (Glendale) • (818) 543-1401



### ՁԵՐ ԿԵԱՆՔԵՆ ՎԱՆԵՑԷՔ 10 ԱՆՊԵՏՔ ԲԱՆԵՐ ԵՒ ԴՈՒՔ ՁԵՉ ԶԳԱՑԷՔ ԵՐՁԱՆԻԿ ՈՒ ԲԱԲԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Ազատեցէք միշտ ձեր ճշմարտացիութիւնը ապացուցելու պահանջէն. Մեր մէջ աջն քան շատ են այնպիսիները, որոնք նոյնիսկ հիւանալի յարաբերութիւններու կորուստի սպառնա լիքէն, ցաւ պատճառելով, ճնշում հրահրելով չեն կրնար յար մարիլ եւ ընդունիլ այլ տեսակէտ: Սակայն իրականութեան մէջ կորուստները չեն արժեր նման վիճակներ:

2. Հրաժարեցէք վերահսկումէն. Պատրաստ եղէք հրաժարիլ մշտապէս ամէն ինչ վերահսկելու անհրաժեշտութենէն: Մի վերահսկէք իրադարձութիւնները, մարդիկ, իրավիճակները:

3. Դուրս եկէք մեղքի զգացումէն. Հրաժարեցէք ուրիշները մեղադրելէ այն բանի համար, թէ ինչ ունիք կամ չունիք, թէ ինչ կը զգաք կամ չէք զգար: Դադրեցէք ցաւ ու ցրիւ ընել ձեր ուժը եւ ամբողջութեամբ պատասխանատուութիւն վերցուցէք ձեր կեանքին համար:

4. Դադրեցուցէք բացասական խօսակցութիւնները ձեզի հետ. Որքան շատ մարդիկ կը վնասեն իրենք զիրենք, միայն անոր համար, որ թոյլ կու տան բացասական միտքերուն եւ զգացումներուն ղեկավարելու իրենց կեանքը: Մի վստահիք ամէն ինչին, ինչ կ'ըսէ ձեր ուղեղը: Դուք աւելի լաւ էք, քան իրականութեան մէջ կը կարծէք:

5. Դադրեցէք մշտական բողոքելէ ամէն ինչէ՝ մարդոցմէ, եւ իրավիճակներէ: Ոչինչ կրնայ ձեզ դժբախտացնել կամ ոչ մէկ իրավիճակ կրնայ ձեզ տխրեցնել:

6. Հրաժարեցէք քննադատութենէ. Դադրեցէք քննադատել մարդիկ: Բոլորս տարբեր ենք:

7. Հրաժարեցէք այլ մարդոց վրայ սպաւորութիւն ձգելու անհրաժեշտութենէն: Մի ձեւացնէք, եղէք այնպէս, ինչպէս որ էք: Ընդունեցէք դուք ձեզ այնպէս ինչպէս որ էք:

8. Դադրեցէք հակազդելէ փոփոխութիւններուն. Փոփոխութիւնները բնական են: Անոնք անհրաժեշտ են մեզ առաջ շար ժելու համար, կ'օգնեն փոխելու մեր կեանքը դէպի դրականը:

9. Մի պիտակաւորէք. Մի պիտակաւորէք մարդիկ, որոնց չէք գիտեր եւ իրադարձութիւնները, որոնք չէք հասկնար: Աս տիճանաբար բացէք ձեր գիտակցութիւնը նորի համար:

10. Փորձեցէք մոռնալ անցեալը. Ատիկա շատ բարդ է, առաւել եւս երբ անցեալը աւելի հաճելի է քան ներկան, իսկ ապագան քիչ մը կը վախցնէ: Սակայն անհրաժեշտ է ընդունիլ այն փաստը, որ ներկան այն ամէնն է, ինչ մենք ունինք:

### ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ՅԱՅՏԱԾ ԵՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐՈՒ ԿԱՏԱՐԵԱԼ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Շատ կիներու համար ընտրեալի տարիքը ոչ մէկ սկզբունքային նշանակութիւն ունի: Ամուսնութիւնները, ուր հարսնացուն փեսացուէն երկու անգամ փոքր է՝ այլեւս զարմանք չեն յառաջացներ: Սակայն, ըստ հետազոտութիւններու, այդպիսի ամուսնութիւնները հազուադէպ կ'ըլլան դրական: Միեւնոյն ժամանակ՝ պարտադիր չէ ամուսնանալ հասակակիցի հետ: Ըստ հետազոտողներու, տարիքային տարբերութիւնը կ'երաշխաւորէ առաւելագոյն ամուսն ամուսնութիւն: Գիտնականներու կարծիքով՝ այնուամենայնիւ, տարիքային տարբերութիւնը դրական ձեւով կ'ազդէ ամուսնական յարաբերութիւններու եւ անոնց երկարակեցութեան վրայ: Մասնագէտները կ'ըսեն՝ որքան շատ է տարիքային տարբերութիւնը, այդ քան մեծ է հաւանականութիւնը, որ ամուսնութիւնը մշտական չըլլայ: Քսանամեայ աղջիկներու եւ 60-ամեայ տղամարդոց մօտ տարբեր են հետաքրքրութիւնները եւ կեանքի

առաջնահերթութիւնները, այդ պատճառով այդպիսի զոյգերու համար յարաբերութիւնները կ'աւարտին դեռ չսկսած: Սակայն հետազոտողները կը պնդեն, որ փոքր տարբերութիւնը նոյնպէս կրնայ բացասաբար ազդել յարաբերութիւններուն վրայ: Այսպէս, 5 տարուան տարբերութիւն ունեցող զոյգերու բաժանման հնարաւորութիւնը կը կազմէ 18%, 10 տարուանը 39% իսկ 20՝ 95%: Միաժամանակ գիտնականները կը պնդեն, որ ամենամոլոր կը համարուին այն ընտանիքները, ուր կիներու եւ ամուսիններու տարիքը նոյնն է, իսկ թոյլատրելի տարբերութիւնը մէկ տարի: Սակայն տարիքը բաժանման միակ պատճառը չէ: Տարբեր կրթական մակարդակներ ունեցող ամուսինները աստիճանաբար կը սկսին կորսնցնել իրարու հանդէպ հետաքրքրութիւնը: Բացի այդ, մասնագէտները պարզած են, որ ընտանեկան զոյգերը, որոնք ունին ընդհանուր երեխաներ, 76% աւելի քիչ կը բաժնուին:

### ԳԵՏՆԱԿԱՆՁՈՐԸ ԿԸ ՍՆՈՒՅԱՆԵ ՄՈՐԹԸ ԵՒ ԿԸ ՎԵՐԱՑՆԵ ՄՈՒԳ ԳՈՅՆԸ

Թեւատակերու մոլգ գոյնը Չղայնացնող երեւոյթ է: Յատկապէս՝ ամրան եղանակին, երբ կը կրենք բաց վերնաշապիկներ եւ զգեստներ: Եթէ յայտնուած ենք նմանատիպ խնդիրի առջեւ, ուրեմն ժամանակն է հետեւիլ այս խորհուրդին: Հաւանաբար տարօրինակ հնչէ, սակայն գետնախնձորը այն բանն է, որ անհրաժեշտ է ձեզի: Գետնախնձորը կը սնուցանէ մորթը եւ կը վերացնէ մոլգ երանգը: Գետնախնձորը կը պարունակէ catecholase անուամբ էնզիմ, որ կը բանայ մաշկին գոյնը եւ կը վերացնէ շարք մը խնդիրներ: Ահա թէ ինչ պէտք է ընել: Մաքրել հոմ գետնախնձորը եւ քերիչէ անցնել: Ստացուած խիւսը քսել թեւատակերուն եւ ձգել կէս ժամ: Նոյնը կատարել այնքան ժամանակ, մինչեւ հասնիք ցանկալի արդիւնքին:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

### ԱՌԱՆՁՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ՊԱՏՃԱՌ, ՈՐ ՍԵՐՈՎ ԶԻ ԲՈՒԺՈՒԻՐ

1. Երբ քեզ չեն հասկնար. Շուրջը կրնան շատ մարդիկ ըլլալ, բայց մարդը այնպէս ստեղծուած է, որ անոր համար անհրաժեշտ են կենդանի եւ լիարժէք յարաբերութիւնները: Իւրաքանչիւր մարդ չի կրնար ունէ մէկուս մօտ անկեղծանալ եւ «հոգին դատարկել»: Բայց երբ մէջը չափէն աւելի բան կը կուտակուի, վտանգ կայ, որ ատիկա ընդմիջտ կը մնայ մէջը: Փակ մարդուն չեն փրկեր յարաբերութիւնները, ընկերները, երբեմն նոյնիսկ հոգեբանները: Հոգեկան վերքը կեանքի բոլոր ոլորտներուն վրայ արտացոլուելու յատկութիւն ունի: Չայն յաղթահարելու համար անհրաժեշտ է առեքեսուիլ անոր: Գտնէք ձեր բարոյցը եւ խոստովանեցէք դուք ձեզի, իսկ յետոյ վերջ տուէք անկէ ամէնալուսն: Միշտ ցաւալի է բանալ այն, ինչ որ փակ է, բայց ատիկա աւելի ցաւալի չէ, քան մշտապէս շրջիլ իրմով: Բաց եղէք, ձեր գաղտնիքները պատմեցէք անոնց, որոնց արժանի կը համարէք, բայց երբեք ոչինչ ձեր մէջ պահեցէք:

2. Երբ դուս չես ինքնաիրացուած. Իւրաքանչիւր մարդու մէջ դրուած է որոշ ճակատագիր՝ անոր կոչումը, այն, որուն համար ան նախատեսուած է: Մենք ի ծնէ որեւէ տղանդ, որը բաներու հանդէպ որեւէ հետաքրքրութիւն ստացած ենք եւ մեր խնդիրն է բացայայտել զանոնք: Մենք այնքան տարբեր ենք եւ բացառիկ, որ ինքնաիրացման մակարդակը կ'որոշուի մեզմէ իւրաքանչիւրի մօտ անհատականօրէն: Եւ նոյնիսկ մեր երկրորդ կէսին հանդիպելու պիտի չես կրակը, որ կեանքը վառուած է մեր մէջ, պիտի չարուեստակէ այլը եւ պահանջել, որ ցոյց տանք աշխարհին: Մի թաղէք ձեր կարողութիւնները, նպա տակ ները եւ երազանքները: Չարագցէք: Ոչ ոք ձեր փոխարէն պիտի ընէ ատիկա, ոչ մէկը ձեզ ուրախութիւն կը նուիրէ, եթէ դուք զայն չգտնէք սիրելի գործի մէջ:

3. Երբ դուս դժգոհ ես դուս քեզմէ. Մարդոց առանձնութեան վերջին, բայց ամենաժողովրդական պատճառը ինքնագնահատականն է: Եթէ դուք մշտապէս կը քննադատէք դուք ձեզ, միայն թերութիւններ կը տեսնէք եւ չէք յարգեր, մշտապէս դուք ձեզ առանձին կը զգաք, որքան ալ մարդիկ շրջապատեն ձեզ: Այդ խնդիրը շատ այժմէական է մեր ժամանակներուն: Մենք մեզ մշտապէս կը համեմատենք այլ մարդոց հետ: Ամենազարմանալիս այն է, որ այդ համեմատութիւնը կ'արտայայտուի ոչ միայն արտաքինի մէջ, այլեւ բոլոր չափանիշներու: Այստեղ ոչ մէկ դեղ կ'օգնէ, չէ՞ որ մենք պէտք է հասկնանք, որ այս անցողիկ աշխարհի մէջ միշտ պիտի գտնուի մեզմէ լաւը: Խնդիրը այն է, որ անոնք, որոնք աւելի վատ են, անհամեմատ աւելի շատ կ'ըլլան, բայց մենք երբեք ուշադրութիւն չենք դարձներ անոր: Այստեղ գլխաւորը կանգ առնելը եւ միայն ինքն իրեն նայիլն է:

### ԱՌՈՂՋ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ 5 ՆՇԱՆ

1. Դուք կ'ամբողջացնէք գիրար. Մտածեցէք մարզական խումբի մասին: Անոր բոլոր մասնակիցները համադրուած կ'աշխատին եւ ատոր շնորհիւ կը հասնին հրաշալի արդիւնքի՝ իրար գումարելով իրենց հմտութիւնները եւ փորձը: Նման աշխատելաճը իսկական եւ երջանիկ յարաբերութիւններու տարբերակիչ նշանն է:

2. Ոչ, ոչ յաճախ: Եւ ոչ այնքան կտրուկ եղանակով: Բայց եթէ դուք կը վիճիք, ատիկա կը վկայէ, որ ձեզմէ իւրաքանչիւրը ունի իր անձնական կարծիքը եւ դուք պատրաստ էք պաշտպանելու զայն: Եթէ երկուքիդ մէկը մշտապէս եւ ամէն ինչի համար համաձայն է միւսին հետ, ատիկա կրնայ վկայել, որ ան կը թաքցնէ իր իրական զգացումներն ու յոյզերը: Երկու հոգի իրենա այն պիտի զգացում ունենալ, թէ վէճերու բացակայութիւնը խաղաղութիւն եւ հանգստութիւն կը նշանակէ, բայց նման վիճակը երկար չի կրնար տեսել:

3. Դուք ամէն ինչի մէջ կ'աջակցիք իրարու. Յարաբերութիւններու մէջ թերի աշխատանքային օր հասակացութիւն չկայ: Դուք կ'ամ յարաբերութիւններու մէջ էք, կ'ամ՝ ոչ: Առողջ յարաբերութիւններու մէջ երկու գուզակներն ալ ամբողջութեամբ ենթակայ են իրարու եւ

փոխյարաբերութիւններուն: Ատիկա կը նշանակէ, որ դուք միասին կ'անցնէք կենսական բոլոր փորձարկումները եւ ամէն ինչի մէջ կ'աջակցիք իրարու:

4. Դուք դադրած էք թաքցնելէ ձեր թերութիւնները. Ոչ ոք կատարեալ է: Բայց եթէ մենք յամառօրէն կը ջանանք ունէ մէկը համոզել, որ այնուամենայնիւ այդ շարաբաստիկ կատարելութիւնն ենք, ուրեմն երբեք չենք կրնար մենք մեզ իրապէս յարմարաւէտ զգալ այդ մարդուն հետ եւ երբեք անոր չենք ձգեր ճանչնալ մեր իսկական հոլութիւնը: Առողջ յարաբերութիւններու մէջ մենք բաց ենք իրարու առջեւ եւ չենք վախնար գուզակներով երեւնալու այնպիսին, ինչպիսին ենք, մենք գիտենք, որ ան կը սիրէ մեզ, հակառակ մեր բոլոր թերութիւններուն:

5. Դուք ֆիզիքական յարաբերութիւններու մասին կը խօսիք. Երջանիկ եւ առողջ յարաբերութիւններ կառուցելու համար դուք պէտք է ամէն ինչի մասին բաց խօսիք, ներառեալ՝ ֆիզիքական յարաբերութեան: Եթէ ձեր կողքին իրօք սիրելի մարդ է, դուք չէք ամէնաբար: Ամօթի բացակայութիւնը այն բանի նշանն է, որ դուք կը վստահիք ձեր կողքին եղող մարդուն:

### ԲՈՒՍԱԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՄԱՐ ԼԱՒԱԳՈՅՆ ՀԱՆԳԻՍՏԵ Է

Մարմինն պարբերաբար հարկաւոր է հանգիստ տալ կենդանական սպիտակուցէն եւ ընտրել բուսականութեան կենսակերպը: Կարմիր միսի յաճախակի օգտագործումը կրնայ ուժասպառ ընել մարմինը: Հարկաւոր է ժամանակ առ ժամանակ գերոյացնել միսի օգտագործումը եւ շնչառութիւնը դնել միտքերու եւ բանջարեղէններու օգտագործման վրայ: Հարկաւոր է աւելցնել կանաչեղէնի, բանջարեղէններու, հատեղէնի, միրգերու չափաբաժի նը: Յանկալի է հրաժարիլ տապկուած, պահածոյացուած, արագ եւ այլ նմանատիպ սնունդէն: Ատիկա կը նպաստէ, որ մարտողական համակարգը հանգստանալ ու ամրանայ:

### ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ ՍԱՐՏ 21-ԱՊՐԻԼ 19**  
 Մտքիդ մէջ կարգ մը հարցեր կան որոնք քեզ կը շփոթեցնեն: Հաւաքոյթի մը ներկայ պիտի ըլլաս ուր ներկայութիւնդ խիստ կարեւոր է: Երբէք պարտադրուած չես հետեւելու ուրիշիմ, քանի արդէն կը վստահիս քու ուժերուդ:  
 Բախտաւոր թիւերդ են: 5,14,26,28,32

**ՑՈՒԼ ԱՊՐԻԼ 20-ՄԱՅԻՍ 20**  
 Շատ անհաւանական է որ անկարելի իրականութիւն դարձնես, սակայն հետեւողական կամքդ եւ յամառութիւնդ կը ստիպեն քեզ ընելու մտքիդ ծրագիրները: Սիրայիմ գետնի վրայ շատ բախտաւոր ես եւ ուրախ:  
 Բախտաւոր թիւերդ են: 1,8,14,23,30

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ ՄԱՅԻՍ 21-ՅՈՒՆԻՍ 20**  
 Շուտով եզրակացութիւններու կը հանգիս եւ իրողութիւնները չես ուսումնասիրեր: Բաւական ազատամիտ ես եւ ըստ այնմ կեանք մը կ'ապրիս առանց շուրջիմներդ նկատի առնելու: Հարազատներուդ մի բարկանար:  
 Բախտաւոր թիւերդ են: 3,11,21,26,33

**ԽԵՏԳԵՏԻՆ ՅՈՒՆԻՍ 21-ՅՈՒՆԻՍ 22**  
 Մտերիմ բարեկամիդ հետ կապդ խզած ես որու պատճառաւ շատ դժկամած եւ անհասգիստ ես: Լաւ մտածէ իսկական պատճառներուն մասին եւ զանց մի առներ իրականութիւնները: Մէկու մը տարեդարձի հաւաքոյթիմ պիտի հրաւիրուիս:  
 Բախտաւոր թիւերդ են: 6,17,28,29,34

**ԱՌԻԺ ՅՈՒՆԻՍ 23-ՕԳՈՍՏՈՍ 22**  
 Վերջերս կեանքիդ մէջ շատ փոփոխութիւններ եղած են որոնք դրական հետք ձգած են վրայդ: Գործդ փոխելու մասին լրջօրէն կը մտածես, բայց չես համարձակիր քայլ մը առնելու: Ապագադ շատ փայլու կ'երեւայ եւ որոշումներդ յաճախ տեղիմ են:  
 Բախտաւոր թիւերդ են: 3,12,25,30,33

**ԿՈՅՍ ՕԳՈՍՏՈՍ 23-ՍԵՊՏԵՄԲԵՐ 22**  
 Իրաւունքներդ երբէք չես ուզեր պաշտպանել, նոյնիսկ եթէ անիրաւ տեղ ամբաստանուած ըլլաս: Հեռու վայրեր երթալէ զգուշացիր գալիք օրերուն: Նիւթական շահիդ վրայ լաւ կեդրոնացիր եւ ճիշդ քայլերը առ:  
 Բախտաւոր թիւերդ են: 6,14,22,27,3

**ԿՇԻՈՔ ՍԵՊՏԵՄԲԵՐ 23-ՀՈԿՏԵՄԲԵՐ 22**  
 Յաճախ կը խորհիս թէ մարդիկ քեզ չեն սիրեր եւ կ'ուզեն հեռանալ քեզմէ: Խորամակութեամբ փորձէ սիրաշահիլ անոնց վստահութիւնը: Նպատակներդ իրականացնելու համար, հապճեպ որոշուշմեր կ'առնես եւ ապա կը զղջաս:  
 Բախտաւոր թիւերդ են: 10,16,24,29,35

**ԿԱՐԻՃ ՀՈԿՏԵՄԲԵՐ 23-ՆՈՅՏԵՄԲԵՐ 21**  
 Ընտանիքի անդամներդ մեծ ակնկալութիւններ ունիս, հակառակ անոր որ դու չես գոհացներ զանոնք: Եսասիրութեանդ պատճառաւ բարեկամներդ հեռու կը մնան քեզմէ: Կրնաս աւելի օրինակելի կեանք մը ապրիլ:  
 Բախտաւոր թիւերդ են: 7,11,21,28,31

**ԱՂԵՂՆԱՒՈՐ ՆՈՅՏԵՄԲԵՐ 22-ԴԵԿՏԵՄԲԵՐ 21**  
 Գործատիրոջդ հասցէիմ դիտումնաւոր արտայայտութիւններ կ'ունեն անոր ուշադրութիւնը գրաւելու համար: Միշտ լաւագոյնիմ կը ձգտիս եւ կ'ուզես մեծ կալուածներու տիրանալ, սակայն դրամիմ արժէքը չես գիտեր:  
 Բախտաւոր թիւերդ են: 14,19,23,30,32

**ԱՅԾԵՂՁԻՐ ԴԵԿՏԵՄԲԵՐ 22-ՅՈՒՆԻՍ 19**  
 Առաջնորդ եւ կարավառող ըլլալու բոլոր յատկութիւնները ունիս, սակայն մէջդ կը պակսի յանդգնութիւնը: Ինքնավստահ եղիր եւ քաջութեամբ զաւակներդ խրատէ նետուելու դէպի կեանքի ասպարէզ: Ծառայատէր եղիր:  
 Բախտաւոր թիւերդ են: 2,13,27,28,33

**ԾՈՎԱՆՈՅՇ ՅՈՒՆԻՍ 20-ՓԵՏՐՈՒՐ 18**  
 Կազմակերպչական աշխատանքներու մէջ առաջնակարգ տեղ կը գրաւես եւ շատ ընդունակ ես սորվելու: Մեծագոյն երջանկութիւնդ ընտանիքդ է որոնք կարօտը ունին քու ցուցմունքներուդ եւ խրատներուդ:  
 Բախտաւոր թիւերդ են: 2,8,14,23,34

**ԶՈՒԿ ՓԵՏՐՈՒՐ 19-ՍԱՐՏ 20**  
 Սուտ ամբաստանութիւն մը չկարեւոր մարսելուդ՝ անհանգիստ ես եւ տխուր: Անձնական որոշումներ առնելը շատ դժուար կը թուի ըլլալ վերջերս: Բարկանալ ձեւանալով՝ ի զուր մի հակասէր գործի ծրագիրներուն:  
 Բախտաւոր թիւերդ են: 6,12,26,30,35

### ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՒԱՏԱՐԻՍ Է ԻՐ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐՈՒՆ

#### Շարունակուած էջ 6-էն

դունելի՞ք, որու խնդիրը կ'ըլլայ աջակցիլը, խորհուրդներով օգնելը:

- Ինչու՞ ոչ: Այդ մէկը ողջունելի կ'ըլլայ, որովհետեւ կը նպաստէ քաղաքացիական հասարակութեան աշխուժացման, նաեւ ճիշդ ճանապարհով ուղղորդման: Բայց ինչ ալ ըլլայ, Հայաստանի քաղաքացին ինք պէտք է տնօրինէ իր ապագան եւ անկէ պէտք է սկսի ամէն ինչ: Այսինքն՝ չի կրնար ըլլալ կրաւորական հասարակութիւն մը, ու դուրսէն անոր փոխարէն մարդիկ գործեն: Դժբախտաբար ես այդ նկատած եմ երկար տարիներ. երբ կը խօսիս մարդոց հետ՝ դժգոհ եմ, բայց ոչ մէկ ձեւով կ'ուզեն մասնակից ըլլալ քաղաքական դժգոհութեան: Պատերու տակ, խանութներու մէջ, սրճարաններու մէջ նստած միշտ կրնան դժգոհիլ: Խորհրդային ժամանակ ալ այդ մարդիկ կային, անընդհատ կը դժգոհէին՝ «Երկիրը՝ երկիր չէ» կ'ըսէին: Հիմա ալ այդպիսի մարդիկ կան, բայց անոնք չեն հասկնար, որ հիմա արդէն կախեալ չեն Խորհրդային համակարգէն, որ անյուսօրէն ըսեն՝ ոչինչ չի փոխուիր, մինչեւ Մոսկուան չ'թելադրէ: Հիմա հասարակութեան ձեռքին կան իրաւունքներ ու լծակներ, եւ եթէ պէտք ըլլայ, այդ փոփոխութիւնը պէտք է առաջացնել քաղաքացիական աշխուժութեամբ: Դժուար է, բայց գոնէ հնարաւորութիւնը կայ:

- Վերջիմ տարիներուն Ձեր՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը շատ աւելի կրաւորական կեցուածք ունի, ընտրութիւններուն գրեթէ չի մասնակցիր, բացառութեամբ՝ 18 Սեպտեմբերիմ ՏԻՄ ընտրութիւններուն մի քանի համայնքներու մէջ աւագանու թեկնածուներ ունենալը: Ո՞րն է այս «բասիւլութեան» պատճառը: Կը կարծէք՝ Հայաստանի մէջ ընտրական գործընթացներով մեծ հաշուով փոփոխութիւններու հասնիլ հնարաւոր չէ՞:

- Դժբախտաբար, մենք տարիներով կը փորձենք Հայաստանի մէջ գաղափարական դաշտ ձեւաւորել, եւ ատոր բացակայութիւնը մեծ հարուած է մեզ համար, որովհետեւ մասնակցիլ ընտրական գործընթացներուն զուտ պաշտօններ գրաւելու նպատակով, այսինքն՝ ծախսել հսկայական գումարներ մի քանի պատգամաւորներ ունենալու համար, եւ այդ պատգամաւորները որեւէ կերպ քաղաքական մշակութիւն ձեւաւորման չկարենան նպաստել, ամենաշատը այս է մեզ խանգարողը, եւ մենք անընդհատ այդ մասին կը խօսինք թէ՛ մեր համագումարներուն, թէ՛ մեր ժողովներուն մէջ: Եւ շատ ցաւալի է, որ մինչեւ այսօր Հայաստանի մէջ ի սպառ կը բացակայ գաղափարական դաշտը:

Տեսէ՛ք, Միացեալ Նահանգներու մէջ պէտք է անպայման քաղաքական բլաթֆորմ ըլլայ: Ճիշդ է, այս ընտրութիւններուն քիչ մը տարօրինակ է, որովհետեւ ունինք Տոնալտ Թրամփի նման թեկնածու մը, որ կը խօսի մտքին եկածը: Բայց՝ Քլինթոնի կայքէջը կը

մտնէք եւ կը տեսնէք հարիւրաւոր ծրագիրներ, որոնք պիտի փորձէ իրականացնել: Հայաստանի մէջ այս մէկը բացարձակապէս գոյութիւն չունի: Կը խօսին, որ սա պէտք է ընեն, նա պէտք է ընեն, պէտք է տնտեսութիւնը զարգացնենք այսքան տոկոսով, բայց ինչպէս այդ մէկը պիտի ընեն, ինչի հիման վրայ, ո՞ր քաղաքական համակարգը ի վերջոյ կը գործէ: Կը խօսինք ժողովրդավարութեան մասին, շատ լաւ, բայց հիմա ո՞ր քաղաքական համակարգը կը գործէ: Երկիրը լիպերալ դեմոկրատ ուղղութեան վրայ է, բայց իշխող կուսակցութիւնը նօրեհական ցեղակրօն գաղափարախօսութիւն կը դաւանի, բայց այս ինչպէս կ'արտայայտուի կեանքի մէջ: Այս պատճառով է, որ մենք որպէս կուսակցութիւն անընդհատ այդ դժուարութիւնները կ'ունենանք եւ կը փորձենք գտնել ոսկէ միջին, որ կարենանք իմաստաւորել մեր գործունէութիւնը եւ, ինչու չէ, ապահովել քաղաքական գործընթացներուն մեր մասնակցութիւնը:

Որպէս Հնչակեան կուսակցութիւն՝ միշտ հպարտացած ենք, որ մեր կուսակցութիւնը առաջին օրու ընէ համամարդկային գաղափարախօսութիւն դաւանած է: Ընկերավարութիւնը այն ժամանակ շատ աւելի մաքուր ձեւ ունէր, քան յետոյ՝ Խորհրդային Միութեան մէջ ունեցաւ: Այսօր մենք ունինք Փարամագի նման հերոս, որու անունը վերցուց քիւրտ ռազմիկ մը ու զնաջ գոհուեցաւ Քոպանիի մէջ: Այսօր Թուրքիոյ մէջ առաջադէմ կուսակցութիւններու համար Փարամագը դարձած է խորհրդանիշ, որովհետեւ իսկապէս կը դաւանէր համամարդկային արժէքներ, այսինքն՝ կը խօսէր ամբողջ ժողովուրդի տնտեսական, ընկերային արդարութեան վերականգնման մասին: Մենք այդ կը փորձենք ընել ու չենք կրնար յաջողութեան հասնիլ հասկնալի պատճառներով: Բայց չենք յուսահատիր, եւ կը կարծեմ՝ ժամանակը պիտի գայ, որ մենք կարենանք այդ մէկը յաջողցնենք: Իսկ թէ ինչու միւս համապետական, խորհրդարանական ընտրութիւններուն չենք մասնակցիր, այդ ալ վերոնշեալով պայմանաւորուած է: Երբեմն մեզ նպատակալարմար չէ, որ քաղաքական, գաղափարական առումով համագործակցինք որոշ ուժերու հետ, եթէ նոյնիսկ ատոր հնարաւորութիւնը կայ միայն իշխանութեան հասնելու կամ ինչ-որ աթոռ ստանալու համար: Այդ չէ մեր առաքելութիւնը: Մենք կը համարենք, որ այն 129 տարին, որ մեր կուսակցութիւնը բոլորած է, անոր համար չէ որ գործարքներու մէջ մտնէ: Ան պիտի մնայ իր սկզբունքներուն հաւատարիմ, թէկուզ ըլլան դժուարութիւններ, որովհետեւ նոյն դժուարութիւնները մենք Օսմանեան կայսրութեան մէջ ալ ունեցած ենք: Ու յետոյ պիտի փորձենք յաջողութեան հասնիլ, իսկ եթէ չհասանք, ուրեմն ինչ-որ բան պակաս է, պէտք է աւելին ընել:

Հարցազրոյցը  
Սիրանոյշ Պապայեանի

### Մուշի մէջ աւելի կան տասը հազար Հայ կը բնակի



«Պի.Պի.Սի.»ի լրագրող Լարա Պետրոսեանի մեծ հօր հայրը այն քիչերէն էր, որոնք փախուստ տուին եւ արտասահմանի մէջ նոր կեանք սկսան: Մէկ դար ետք, Լարա կ'այցելէ թուրքիոյ մէջ իր հայ ընտանիքին քանդուած թաղամասը:

«Անատոլի մերող տարածքին մէջ գտնուող հայերը տեղահան եղան ու սպանուեցան: Եկած եմ մօտակա Մուշ քաղաքը: 1915ին անոր բնակչութեան շուրջ կէսը հայ էր: Այսօր քաղաքը մեծ մասամբ քրտական է:

Նոր մզկիթներ կան: Հայկական շատ քիչ շէնքեր կը մնան: Սակայն կ'ուզեմ տեսնել եթէ տակաւին այս իսլամական քաղաքին մէջ ապրող թաքնուած հայեր կան:

Մուշի յետին թաղերուն մէջ կ'այցելեմ նոր բացուած Հայկական մշակութային կեդրոնը: Անոր հիմնադիրը ինձի կը պատմէ, թէ ինչպէս ծնունդով հայ ըլլալուն համար իր կեանքը վախով ապրած է:

«Նախահայրերս հայերու ջարդին ընթացքին սուրէ անցուած են» կ'ըսէ Հայկական մշակութային կեդրոնի հիմնադիր Հայրեթիին Արսլան՝ աւելցնելով. «Ցեղասպանութենէն ետք մեր երիտասարդ աղջիկները ամուսնութեան տրուեցան ոչ-հայերու: Անոնք ստիպուեցան իսլամանալու, որովհետեւ Մուշի մէջ քրիստոնէութիւն գոյութիւն չունի: Այս կեդրոնը բանալն է ետք շատեր եկան եւ ըսին. «Մեծ մայրս հայ է»: Գիտենք, որ այս շրջանին մէջ անոնց շարաւիղ եղող թերեւ 10 կամ 15 հազար հոգի կայ»:

Պատասխանելով այն հարցումին թէ Մուշի մէջ տակաւին հայերու համար վտանգ գոյութիւն ունի՞, Արսլան կ'ըսէ. «Այո՛, այդպէս է: Մուշի հայերը վախի մէջ են: Հակառակ անոր որ այս կեդրոնը տեղական է, անոնք այստեղ չեն գար: Անոնցմէ ոմանք մինչեւ իսկ չեն համարձակիր այստեղէն անցնիլ»:

### ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՉՈՐԱՑԱԾ ԾԱՌԻ Է ՆՍԱՆ

Շարունակուած էջ 15-էն

հարազատների անտարբերութիւնից, ապրում է կնոջ հետ տղայի յատկացրած մէկ հատիկ սենեակում բակի մէկ հատուածում վարձ վճարելով:

«Կարծեմ որ տեղեակ լինես, այստեղ Ամերիկայում մեծահասակներին, անկարներին եւ այլն յատուկ խնամք եւ հոգատարութիւն է ցուցաբերում, կան առողջապահական կենտրոններ, որտեղ զբաղեցնում են մեծահասակներին,

բնակարանի համար էլ պիտի արձանագրուել, որը հերթականօրէն յատկացնելու են: Պատրաստ եմ քեզ օգնելու եւ սիրով կ'անեմ, դե՛հ, տնայէ՛ն, մարդ ե՛նք. իրար ցաւի եւ դժուարութիւններին պիտի հասնենք, օգտակար լինենք, կեանքի քաղցրութիւնը եւ իմաստը սրա մէջ է, մարդը մարդով է ապրած եւ ուրիշների երջանկութեամբ ինք եւս երջանիկ:

Շնորհակալութեամբ հրաժեշտ տուինք Մատուրին մեքենայովս պրն. Արտաւազին տուն հասցնելով:

### ՀԱՅՈՑ ՀԵԹԱՆՍԱԿԱՆ ՀԱԲՍՔԻ

Շարունակուած էջ 13-էն

գեր էին եկել Հայոց երկիր, քանդել եկեղեցիները, ատրուշաններ պատել, որ հայեր կրակին երկրպագէին: Հայոց երկրի կղերականութիւնը ու նախարարական տները Արտաշատում ժողով էին գումարել, մերժման գիր ուարկել թագաւորին, փոխանակ կուրի յախուռն կոչի, յայտարարել էին՝ «Մեր պարանոցը, քու սուրը, արա ինչ կամենում ես», հապա եղա՞ւ:

Յագիկերտ, նախարարներին Տիգրան էր կանչել, ստիպել ուրանալ իրենց հաւատքը, երկրպագել արեւին: Ուրացան: Սուրէն-Գրիգորի թռուս թող՝ դժկամ վարդանին նաեւ համոզեցին, պահի խոհուն որոշում էր...: Վերադարձան երկիր, քարով դիմաւորեցին նրանց, մինչեւ որ իմանային, որ ուրացումը առերես էր: Որոշեցին պատերազմել, Սիւնիաց աշխարհի նահապետ Վասակ իշխան ընդհանգաւ, նպատակադրուել էր վերականգնել երկրի թագաւորական իշխանութիւնը: Վարդան ու Վասակ հանդիպել էին իրարու... յետոյ էլ գրկախառնուել, Յովսէփ կաթողիկոս նկատել էր այն, խօսել՝ «Ամէն ինչ վերջացաւ»: Գրիգորի թռուս-թող, սպարապետ Վարդանը գլխաւորել էր հայոց աշխարհագորային 66 հազարանոց բանակը:

Վարդան, համախոհ նախարարների հետ, հայոց բանակը պատերազմի էր առաջնորդել: Աղուանաց երկրում ճակատել պարսկական բանակին, պարտութեան մատնել, շարունակել արշաւը դէպի Արտազու գաւառի Աւարայրի դաշտ, բանակել Տղմուտ գետի ափին: Հայոց բանակը անցնելով գետը, ճակատել արեւելքի հզոր բանակի դէմ, կուռում առաւելութիւնը հայերի կողմն էրէ եղել, իրենց դէմ կուռում էին նաեւ Վասակի ու նրա համախոհ նախարարների գլխաւորած զօրքը: Ընկրկել էր Հայոց բանակի եզրային թեւը, Վարդան պահեստային զնդով շտապել օգնութեան, յաղթական երթով խրոնել փղերի «Մատեան»

գունդ... գոհուել, խուճապ էր առաջացել հայոց բանակում՝ նահանջել մարտի դաշտից: Հայոց կողմից գոհուել էին 1036 հոգի, պարսիկներին՝ 3544: Վարդան գոհուել էր, սակայն իր թիկնապահներից ոչ մէկը, այդ ինչպէս եղաւ... Վասակի հետ հանդիպման անյայտ խօսակցութեան դաւադրութեան արդիւնք: Ըստ գիտականների հաւաստման՝ Խորենացու, Եղիշէի եւ Ժամանակի այլ պատմիչների մատեանները կեղծուել էին յետագայ արտագրութիւնների ժամանակ: Կեդրոնական պետութիւն ստեղծել ձգտող յաղթական Արշակ թագաւորի Տիգրան գնալու ու բանտարկուելու, կղերականութեան ու նախարարների իրաւունքները սահմանափակող Արշակի որդի իմաստուն ու կշռադատ Պապ թագաւորի սպանութիւնը՝ դաւադրութեան արդիւնք էր... պատմիչների ոչ մի պատճառաբանութիւն: Հաւատալու է, որ Աղեքսանդրիայում կրթութիւն ստացած Մովսէս Խորենացին Հայոց ծագումը հաւաստելը առապելեական Նոյի Յաբէթ որդու սերունդից, երբե՛ք, ո՛չ...: Տիգրանում Հայոց նախարարներին դատելու ատեն, Ամատունի իշխանը, Վասակին ամբաստանել էր, որ պատերազմի պատճառը Վասակն էր, ցանկացել Հայաստանում վերականգնել Հայոց թագաւորութիւնը, նրա պատասխանի մասին չիշատակութիւն չկայ, անիրաւի դաւաճան հռչակեցին, չթողին Սիւնիաց աշխարհի նահապետին թագաւորելու: Մարեց Հայոց թագաւորութեան յոյսի լոյսը:

Վարդանանց կուրի «Բարոյական յաղթանակ»-ի խորհուրդը՝ աշխարհում հաւատքի առաջին կուր, հայրենի հողի, Հայցեղի բարոյականութեան, ընտանիքի պատուի, ազգի կենցաղի, արեւելեան իմաստութեան պաշտպանութիւնն էր: Ֆրանսան Հոն Աթիլլային պարտութեան մատնելով՝ Եւրոպան փրկեց ասիականացումից, Պարսկաստանի դէմ Հայաստանի կուրը՝ արեւելքում քրիստոնէական գաղափարախօսութեան յաղթանակի փարոսի լոյսը վառեց, հաւատքի ազատութեան դրօշը ծածանեց:

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Հանգուցեալ ԶԱՐՈՒՀԻ ԲԱՐԻՔԵԱՆԻ մահուան առթիւ մեր ցաւակցութիւնները կը յայտնենք ընտանեկան պարագաներուն մասնաւորաբար Տէր եւ Տիկ ընկ. Պօղոս եւ Արփի Մարգարեաններուն: «Մասիս»

Հանգուցեալ ԶԱՐՈՒՀԻ ԲԱՐԻՔԵԱՆԻ մահուան առթիւ Տէր եւ Տիկ ընկ. Սեդրակ եւ Ալին Աճեմեաններ իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի բոլոր պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ ընկ. Պօղոս եւ Արփի Մարգարեաններուն: Առ այդ փոխան ծաղկեպսակի \$300 կը նուիրեն «Մասիս»ին:


Հանգուցեալ ԶԱՐՈՒՀԻ ԲԱՐԻՔԵԱՆԻ մահուան առթիւ Տիկ Մարի Իլանճեան իր վշտակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ Պօղոս եւ Արփի Մարգարեաններուն: Առ այդ փոխան ծաղկեպսակի \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

Հանգուցեալ ԶԱՐՈՒՀԻ ԲԱՐԻՔԵԱՆԻ մահուան առթիւ Տէր եւ Տիկ Վահան եւ Անժել Գազեգեաններ իրենց վշտակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ Պօղոս եւ Արփի Մարգարեաններուն: Առ այդ փոխան ծաղկեպսակի \$100 կը նուիրեն Հ.Մ.Մ.ին:

Հանգուցեալ ԶԱՐՈՒՀԻ ԲԱՐԻՔԵԱՆԻ մահուան առթիւ Տէր եւ Տիկ Ժիրայր եւ Սիւզան Պօյաճեան իրենց վշտակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ Պօղոս եւ Արփի Մարգարեաններուն: Առ այդ փոխան ծաղկեպսակի \$100 կը նուիրեն Հ.Մ.Մ.ին:

### ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տէր եւ Տիկ Վահան եւ Անժել Գազեգեաններ զնահատելով Հ.Մ.Մ.ի տարած գործունէութիւնները եւ ունեցած յաջողութիւնները \$200 տոլար կը նուիրեն Հ.Մ.Մ.ին: Այս առթիւ Հ.Մ.Մ.ի վարչութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ ընկ. Վահան եւ Անժել Գազեգեաններուն: Հ.Մ.Մ.ի ՎԱՐՁՈՒԹԻՒՆ



**MEHER BABIAN, D.D.S.**  
General Dentistry

---

1111 S. Glendale Avenue  
Suite 206  
Glendale, CA 91205

Tel: (818) 547-0884  
Tel: (818) 547-1476

### ՀՅՖ-Ն ՀԵՆՐԻԽ ՄԻԽՈՒՐԵԱՆԻ ՀԱՐՑՈՎ ՆԱՄԱԿ Է ՍՏԱՑԵԼ «ՄԱՆՀԵՍԹԵՐ ԵՌՆԱՅԹԵՂԻՑ»

Ֆուտպոլի Հայաստանի հաւաքականի եւ «Մանչեսթեր Եռնայթեղի» կիսապաշտպան Հենրիխ Միխոյրեանը, ամենայն հաւանականութեամբ, չի մասնակցի Ռուսիայի (Հոկտեմբերի 8) եւ Լեհաստանի (Հոկտեմբերի 11) դէմ աշխարհի 2018թ. առաջնութեան ընտրական փուլի խաղերին, յայտնում է ՀՅՖ կայքը:

Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիան «Մանչեսթեր Եռնայթեղի» ստացել է պաշտօնական նամակ, որում անգլիական ակումբը ՀՅՖ-ին խնդրում է թույլ տալ Հենրիխ Միխոյրեանին չմասնակցել Հայաստանի ազգային հաւաքականի նախապատրաստական հաւաքին եւ Ռուսիայի ու Լեհաստանի հաւաքականների դէմ հանդիպումներին: Նամակի մէջ «Մանչեսթեր Եռնայթեղի» բժշկական անձնակազմի ղեկավար Սթիվեն Մքենչը, մասնաւորապէս, նշում է. «Հենրիխը գտնուում է վերականգնման փուլում ձախ ազդրի մկանի վնասուածքից յետոյ, որը կրկնուել էր նրա մօտ այս ամսուայ ընթացքում «Մանչեսթեր Եռնայթեղում» խաղալու ընթացքում: Չնայած նրա մօտ վերջին շաբաթուայ ընթացքում զգալի առաջընթաց է նկատուել, բայց Միխոյրեանը մինչ օրս էլ ի վիճակի չէ մասնակցել մարզումային գործընթացին ամբողջական ծանրաբեռնուածութեամբ, առաւել եւս մասնակցել որեւէ հանդիպման: Հաշուի առնելով այդ հանգամանքը՝ շնորհակալ կը լինենք, եթէ Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիան թույլ տայ Հենրիխ Միխոյրեանին չմասնակցել ազգային թիմի յառաջիկայ 2 հանդիպումներին՝ մնալով Մանչեսթերում եւ շարունակելով իր վերականգնումը»:

Յիշեցնենք, որ Հենրիխ Միխոյրեանը խաղադաշտից բացակայում է Սեպտեմբերի 10-ից, երբ նրա վնասուածքը կրկնուել էր «Մանչեսթեր Սիթիի» դէմ խաղում: Կիսապաշտպանը «Մանչեսթեր Եռնայթեղի» կազմում էր յայտաւորուել նաեւ «Սթոք Սիթի» դէմ Անգլիայի առաջնութեան 7-րդ տուրի տնային հանդիպմանը, որը կայացաւ Հոկտեմբերի 2-ին եւ աւարտուեց 1:1 հաշուով: Այդ հանդիպման նախախաղային ասուլիսում «Մանչեսթեր Եռնայթեղի» պորտուգալացի գլխաւոր մարզիչ ժոզէ Մոուրինիոն յայտնել էր, որ Հայաստանի հաւաքականի աւագն արդէն մարզում է թիմի ընդհանուր խմբում:

### ՎԱՐՈՒԺԱՆ ՍՈՒՔԻԱՍԵԱՆԸ ՀՐԱԻՐԵԼ Է ԸՆԴԱՄԵՆԸ ԵՐԿՈՒ ՅԱՐՁԱԿՈՒՈՂ



Հայաստանի ազգային հաւաքական են հրաւիրուել 23 ֆուտպոլիստներ

Հոկտեմբերի 8-ին եւ 11-ին Հայաստանի ֆուտպոլի հաւաքականը կ'անցկացնի աշխարհի 2018թ առաջնութեան ընտրական փուլի հերթական հանդիպումները՝ համապատասխանաբար Ռուսիայի եւ Լեհաստանի հաւաքականների հետ:

Ինչպէս յայտնում է Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիայի մամուլի ծառայութիւնը, այդ հանդիպումներին պատրաստուելու համար մեր ազգային թիմը Հոկտեմբերի 3-9-ը ուսումնամարզական հաւաք կ'անցկացնի ՀՅՖ Տեխնիկական կենտրոնում՝ ֆուտպոլի ակադեմիայում:

Հայաստանի հաւաքականի գլխաւոր մարզիչ Վարուժան Սուքիասեանն հրապարակել է այն ֆուտպոլիստների անունները, որոնք կը մասնակցեն այդ հաւաքին: Դրանք թուով 23-ն են:

Դարպասապահներ՝ Արսէն Բեգլարեան («Ալաշկերտ»), Անատոլի Ալվազով («Շիրակ»), Գոռ Մանուկեան («Փիւնիկ»):

Պաշտպաններ՝ Գայլ Անդոնեան («Մարսել» Ֆրանսիա), Վարազդատ Հարոյեան («Փաղիղէ» Իրան), Տարոն Ոսկանեան («Կարմիրտիսա» Կիպրոս), Լեւոն Հայրապետեան («Փայքան» Իրան), Հրայր Մկոյեան («Էսթեղլալ» Իրան), Գէորգ Յովհաննիսեան («Շիրակ»), Կամօ Յովհաննիսեան, Արթուր Քարտաշեան («Փիւնիկ»):

Կիսապաշտպաններ՝ Հենրիխ Միխոյրեան («Մանչեսթեր Եռնայթեղ» Անգլիա), Մարկոս Պիզզելլի («Ալ Ֆուջէրա» ԱՄԷ), Արաս Օզբիլիս («Բեշիքթաշ» Թուրքիա), Գոռ Մալաքեան («Ստալ» Ուկրաինա), Դաւիթ Մանոյեան («Կարմիրտիսա» Կիպրոս), Արտակ Եղիզարեան, Արտակ Գրիգորեան, Կարէն Մուրադեան («Ալաշկերտ»), Զաւէն Բաղդոյեան («Բանանց»), Դաւիթ Յակոբեան («Շիրակ»):

Յարձակուողներ՝ Գեղամ Կազիմեան («Կարպատներ» Ուկրաինա), Վարդան Պողոսեան («Փիւնիկ»):

Նշենք, որ նախապէս հրաւիր ստացած երկու ֆուտպոլիստներ՝ Տիգրան Բարսեղեանը եւ Յովհաննէս Համբարձումեանը, վնասուածքների պատճառով չեն մասնակցի հաւաքին:

### «ՄԱՆՀԵՍԹԵՐ ՍԻԹԻ» ԱՌԱՋԻՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Անգլիական Պրեմիեր լիգայի 7-րդ տուրում առաջատար «Մանչեսթեր Սիթին» Լոնտոնում 0:2 հաշուով պարտուեց «Տոտենհեմին»՝ կրելով առաջին պարտութիւնն այս մրցաշրջանում:



Լոնտոնցիներն առաջին խաղակէստում խփեցին 2 կոլ, իսկ ընդմիջումից յետոյ կարող էին մեծացնել առաւելութիւնը, եթէ արժենտինացի կիսապաշտպան Էրիկ Լամելան չվրիպէր 11 մեթրանոցից:

Գործող ախոյեան «Լեսթերը» 0:0 հաշուով աւարտեց «Սաութհեմփթոնի» դէմ տնային խաղը:

Մինչեւ այս խաղը 100 տոկոսանոց ցուցանիշ ունեցող «Մանչեսթեր Սիթին» Անգլիայի առաջնութիւնում առաջին պարտութիւնը կրեց Խոսեպ Գուարդիոլայի գլխաւորութեամբ, բայց 18 միաւորով առաջատարն է: «Տոտենհեմը» 17 միաւորով բարձրացաւ երկրորդ տեղ, իսկ լաւագոյն եռեակը եզրափակող «Լիվերպոլն» ունի 16 միաւոր:

### «ՌԵԱԼԸ» ԶՅԱՂԹԵՑ ԶՈՐՐՈՐԴ ԽԱՂՈՒՄ ԱՆԸՆԴՄԷՉ

Մադրիդի «Ռեալը» չյաղթեց չորրորդ խաղում անընդմէջ: Սպանիայի առաջնութեան 7-րդ տուրում Արքայական ակումբն ընդունեց «Էյբարին» եւ բաւարարուեց մէկ միաւորով: Գրանցուեց 1:1 հաշիւը:



Հանդիպման հաշիւը 6-րդ րոպէին բացեց «Էյբարի» սպանացի կիսապաշտպան Ֆրան Ռիկոն, որի կողմից դաշտի տէրերն առաջին խաղակէստում պատասխանեցին ուելսի Գարեթ Բեյլի դիպուկ հարուածով:

Երկրորդ խաղակէստում Զինեդին Զիդանի թիմն ունէր մեծ առաւելութիւն եւ ստեղծեց մի շարք կոլային պահեր, սակայն չյաղթանակ կորցել չյաջողուեց:

«Ռեալը» վաստակեց 15 միաւոր եւ հաւասարուեց առաջին տեղ բարձրացած Մադրիդի «Աթլետիկոյին»: Այս տուրում առաջատարներին կարող է շրջանցել 13 միաւոր ունեցող «Բարսելոնան», որը Հոկտեմբերի 2-ին Վիգոյում ուժերը կը չափի «Սելտայի» հետ:

Յիշեցնենք, որ Պրեմիերայի նախորդ 2 տուրերում «Ռեալը» ոչ ոքի էր խաղացել «Լաս Պալմասի» (2:2) եւ «Վիլլառեալի» (1:1) հետ, իսկ Ախոյեանների լիգայում Սեպտեմբերի 27-ին չէր յաղթել Դորամոնդի «Բորուսիային» (2:2):

### «ՌԵԱԼ ՍՈՒԹ ԼԵՅՔԸ» ԵՒ «ԶԻԿԱԳՕ ՖԱՅՐԸ» ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԵՆ ԿՐԵԼ

MLS-ի կանոնաւոր առաջնութեան հերթական տուրում «Զիկագօ Ֆայրը» մրցակցի խաղադաշտում 0:3 հաշուով պարտուել է «Կոլամբուսին», իսկ «Ռեալ Սոլթ Լէյքը» հիւրընկալուելիս թույլ է գտնուել «Սան Խոսեից»՝ 1:2:

Հայաստանի հաւաքականի թեկնածու Դաւիթ Արշակեանը «Զիկագօ Ֆայրի» մեկնարկային կազմում խաղացել է 63 րոպէ, իսկ «Ռեալ Սոլթ Լէյքի» յարձակուող Եուրա Մովսիսեանը փոխարինման է դուրս եկել 76-րդ րոպէին, երբ հաշիւը 1:2 էր:

Յիշեցնենք, որ Արշակեանը եւ Մովսիսեանը չեն հրաւիրուել Հայաստանի հաւաքական, որը շուտով կը սկսի պատրաստուել Ռուսիայի եւ Լեհաստանի դէմ աշխարհի 2018թ. առաջնութեան ընտրական փուլի խաղերին:

### ԴԱՆԻԵԼ ՌԻԿԱՐԴՈՆ ՅԱՂԹԵԼ Է ՖՈՐՄՈՒԼԱ-1-Ի ՍԱԼԱՅՁԻԱՅԻ ԳՐԱՆ ՊՐԻՈՒՄ

Ֆորմուլա-1-ի առաջնորդ Red Bull թիմի աւստրալացի արշաւորդ Դանիէլ Ռիկարդոն յաղթել է Մալաչիայի գրան պրին՝ մրցաշարի 16-րդ հտապը: Երկրորդ տեղը զբաղեցրել է նրա թիմակից հոլանտացի Մաքս Ֆերստապենը, երրորդը՝ Mercedes-ի արշաւորդ Նիկօ Ռոսբերգը:



Mercedes-ի արշաւորդ Լուիս Հեմիլթոնը, ով առաջատարն էր, շարժիչի հրդեհի պատճառով 41-րդ շրջանում դուրս է մնացել պայքարից: